Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 26.05.2021թ. չորեքշաբթի թիվ 24 (997)

Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք Սարդարապատից

Սարդարապատ

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը մղել է հարյուրավոր ճակատամարտեր, հիմնականում՝ հաղթական: Իրենց նշանակությամբ ամենից հիշարժանը դրանցից երեքն են. **Ավարայրի, Սարդարապատի, Շուշիի**... Եթե **Ավարայրը** մեր հիշողության մեջ մնացած առաջին հայրենական պատերազմն է, նաեւ՝ աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես, որ մեզանում մնաց՝ որպես հանուն հայրենիքի անձնազոհության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ, իսկ **Շուշին** դրան հավելեց նաեւ նոր ժամանակներում մեր չհնացող ազատասիրության վերածննդի ոգին, ապա **Սարդարապատը**, այդ ամենով հանդերձ, առանձնանում է շատ էական, թերեւս մեզ համար ամենից բախտորոշ խորհրդով. նախ՝ **մեզ համար չկան անելանելի վիճակներ, մենք միշտ ուժեղ ենք ավելի, քան պատկերացնում ենք,** եւ հետո՝ **մենք դատապարտված ենք ապավինելու միայն մեր սեփական ուժերին, կարողություններին, հնարավորություններին...** Մեր անհաջողություններն սկսվում են այնտեղ, որտեղ հույսեր ենք փայփայում՝ օգտվելու օտարի բարեկամությունից: Եվ դրան հակառակ՝ չի եղել մի դեպք, երբ մենք համախմբված եւ ինքնուրույն ելնենք վճռական մարտի կամ այլ գործողության եւ ձախողվենք: **Մենք ոչ միայն եզակի ենք մեր տեսակով ու ստեղծածով, այլեւ մենակ ենք մեր ճակատագրով:** Սարդարապատն ապացուցեց, որ այդ մենակությունը նաեւ մեր ազգային իղձերի իրականացման միակ գրավականն է... Մենք լքված էինք, մի կարճ ժամանակահատված՝ թողնված մեր հույսին եւ, թեեւ եղեռնազարկ, արագորեն համախմբվեցինք, հաղթեցինք եւ վերականգնեցինք մեր անկախ պետականությունը: Այն տեւեց ընդամենը երկու տարի, որովհետեւ կրկին ապավինեցինք օտարին...

Ռազմական անկասելի հաղթարշավներն անգամ չեն փարատել մեր *երկմտանքը*. հաղթանակի *պտուղները* փորձել ենք վայելել՝ դարձյալ օտարի՞ միջամտությամբ... Ու այդ հոգեբանությամբ շղթայված՝ մեր հաղթանակները չեն դարձել *շարունակական, վերջնական*...

Սարդարապատը **գոյատեւելու մի պարզ բանաձեւ - խորհուրդ** է պարգեւել մեզ. նախեւառաջ, կրկնենք, ***ապավինել միայն սեփական ուժերին:*** Եւ ապա՝ ամենաաներեւակայելի երազանքն անգամ իրագործելի է մեզ համար, եթե հանդես ենք գալիս ազգի բոլոր շերտերի, ժողովրդի բոլոր հատվածների ***միասնական կամքով:***

Ահա այսպես **Սարդարապատը**, արդեն **103** տարի, փորձում է մեզ խրատել ամենաիմաստուն խորհրդով. ***ապագան նրանն է, ով չի կրկնում իր սխալները եւ իր հաղթանակները դարձնում է շարունակական:***

Գ.Մ.





Աշխարհի հետ

Վասն պահպանման

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ **Արա Խզմալյանն** ընդունել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հարցերի զեկուցող **Փոլ Գավանին** և ԵԽԽՎ Միգրացիայի հանձնաժողովի քարտուղար **Մարկ Նևիլին:**

Շեշտելով, որ հայ ժողովուրդն ապրում ում է իր պատմության ամենաբարդ փուլերից մեկը, Արա Խզմալյանը շնորհակալություն է հայտնել հետպատերազմական շրջանում ԵԽԽՎ ցուցաբերած աջակցության համար: Նախարարի տեղակալը, մասնավորապես, կարևորել է Հայաստանի և Արցախի հարցով ԵԽԽՎ վերջին բանաձևը, որում, ի թիվս մարդու իրավունքների խախտման խնդիրների, առանձին բարձրացվել է նաև Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների պահպանության խնդիրը:

շարունակությունը՝ էջ 2

Սերունդ

14.000 առաջին դասարանցի

ՀՀ պետական հանրակրթական դպրոցների առաջին դասարանցիների առցանց ընդունելության կարևոր բաղադրիչը երեխաների և ծնողների տվյալների համապատասխանության նախապես ստուգումն է: Այն մինչև մայիսի 31-ն իրականացվում է stugum.emis.am կայքում՝ երեխաների և ծնողների տվյալները մուտքագրելով: Ստուգման համակարգը բացվել է մայիսի 3-ից: Մայսիսի 24-ի դրությամբ stugum.emis.am կայքի միջոցով հաստատվել է առաջին դասարան հաճախող շուրջ 14.000 երեխաների և նրանց ծնողների տվյալների համապատասխանությունը: Ստուգման համակարգից օգտվող շահառուների ակնկալվող թիվը, սակայն, շուրջ 25 հազար է, հետևաբար՝ ակնկալվում է, որ առաջիկա օրերին առավել մեծ կլինի ակտիվությունը՝ ծնող-երեխա կապը հաստատող տվյալների համապատասխանությունը ստուգելու առումով: Այս մասին *«Արմենպրես»* գործակալության մամուլի սրահում հրավիրված ասուլիսում հայտարարել է *«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»* ՊՈԱԿ-ի տնօրեն **Արտակ Պողոսյանը:** Օգտվելով առիթից՝ նա ծնողներին կոչ է արել հետագա խնդիրներից խուսափելու համար տվյալների ստուգումն իրականացնել մինչև մայիսի 31-ը:

շարունակությունը՝ էջ 3

Այս համարում

2020-2021 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը

տե՛ս՝ էջ 5-7

Վասն պահպանման

սկիզբը՝ էջ 1

Արա Խզմալյանը ԵԽԽՎ պատվիրակներին տեղեկացրել է, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով հայկական ավելի քան 2000 պատմամշակութային հուշարձան, ինչպես նաև 10 թանգարան (8-ը՝ պետական, 2-ը՝ մասնավոր)՝ շուրջ 20 հազար ցուցանմուշներով, մնացել են Ադրբեջանի վերահսկողության տակ: Ընդ որում՝ ռազմական գործողությունների ողջ ընթացքում մշակութային կոթողները թիրախավորվել և գնդակոծվել են:

Արա Խզմալյանը մտահոգություն է հայտնել Ադրբեջանի տիրապետության ներքո անցած տարածքներում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգությանը սպառնացող վտանգի վերաբերյալ՝ հաշվի առնելով այդ երկրի կողմից տասնամյակներ շարունակ իրականացվող հակահայ քաղաքականությունը և հայկական ժառանգության թիրախավորված ոչնչացումը:

Նախարարի տեղակալը փաստել է, որ Ադրբեջանն արհեստական խոչընդոտներ է ստեղծում օկուպացված տարածքներում հայկական պատմամշակութային ժառանգության առկա վիճակը գնահատելու նպատակով մշտադիտարկման այցերի, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների առաջարկությունների առումով:

«Ամենախոսուն դեպքը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մոնիթորինգային առաքելության մերժումն էր: Խնդիրն առավել բարդանում է՝ հաշվի առնելով, որ Ադրբեջանը չի անդամակցում Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդին (ICOMOS), որն անհնար է դարձնում համագործակցությունը նաև մասնագիտական հարթակում»,- ընդգծել է նա և հավելել, որ պետք է միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացման վտանգը չի վերաբերում սոսկ հայկական մշակույթին, քանի որ ի դեմս հայկական մշակութային ժառանգության՝ գործ ունենք համաեվրոպական քրիստոնեական արժեքների հետ, և այդ համատեքստում հայկական հետքի ոչնչացումը սպառնում է նաև համաեվրոպական մշակութային ժառանգությանը:

Արա Խզմալյանը հատուկ նշել է, որ հայկական կողմը պատմամշակութային ժառանգության պահպանության գործում ակնկալում է եվրոպացի գործընկերների գործուն աջակցությունը: ԿԳՄՍ նախարարի տեղակալն ընդգծել է, որ համացանցում հասանելի տեսանյութերն ու լուսանկարները փաստում են, որ Ադրբեջանում շարունակվում է հայկական ինքնության ոչնչացման պետական քաղաքականությունը, ինչի դրսևորումներից են Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու գմբեթի վերափոխման աշխատանքները, Դադիվանքը որպես ոչ հայկական եկեղեցի ներկայացնելու փորձերը:

Եվրոպացի պատվիրակները նշել են, որ զեկույց է պատրաստվում պատերազմի հետևանքների մասին, որը սեպտեմբերին մեկնարկելիք նստաշրջանում ներկայացվելու է ԵԽԽՎ բոլոր 47 անդամ երկրների պատգամավորներին: Զեկույցի պատրաստման նպատակով ԵԽԽՎ միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հարցերի զեկուցող Փոլ Գավանին պատրաստվում է այցելել նաև Ադրբեջան: Նա մտահոգիչ է համարել, որ Արցախ այցելելու հնարավորություն չի ունեցել:

Արա Խզմալյանն իր հերթին նշել է, որ ԵԽԽՎ պատվիրակության, ինչպես նաև միջազգային այլ պատվիրակությունների՝ Արցախ կատարելիք այցի հետ կապված, հայկական կողմը մշտապես կառուցողական դիրքորոշում է ցուցաբերել:

Հանդիպման ավարտին տեղի է ունեցել մտքերի փոխանակում:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աշխատաժողով

ՄԿՈՒ համակարգ. մարտահրավերներ եւ հեռանկարներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, *«Մարդը կարիքի մեջ»* կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ և Եվրոպական միության ֆինանսավորմամբ, կազմակերպել է երկօրյա աշխատաժողով՝ *«ՄԿՈՒ համակարգ. մարտահրավերներ և հեռանկարներ»* թեմայով: Միջոցառմանը մասնակցել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և էկոնոմիկայի նախարարությունների, Եվրոպական միության հայաստանյան պատվիրակության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի, ՄԿՈՒ հաստատությունների, ինչպես նաև տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի մասնակիցներին ողջունել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը:** Նա շնորհակալություն է հայտնել բոլոր գործընկերներին՝ ի դեմս *«Մարդը կարիքի մեջ»* կազմակերպության, տարիներ շարունակ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի աջակցության համար:

«ՄԿՈՒ ոլորտը կրթության համակարգի այն օղակն է, որը պետք է առաջինն արձագանքի տնտեսության կարիքներին ու աշխատաշուկայի զարգացմանը և իր ճկունությամբ հնարավորություն տա բավարարել այդ կարիքը՝ նոր մասնագիտությունների և որակավորումների, ինպես նաև կադրերի պատրաստման ուղղությամբ: Այս տեսանկյունից ՄԿՈՒ հաստատությունները բոլոր մարզերում մասնագիտական կրթություն ստանալու հիմնական օղակն են: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հասկանալ, թե տարբեր ծրագրերի արդյունքում որակական և համակարգային փոփոխությունների համար ինչ առաջխաղացման տեղ կա»,- նշել է փոխնախարարը և հավելել, որ այդ պահը հասունացել է, քանի որ տարիներ շարունակ ՄԿՈՒ ոլորտում փորձարկվում են դուալ համակարգը, ԱՀՈ մոդելները, հայեցակարգային տարբեր փաստաթղթեր են մշակվում, և ներկայում կարիք կա հասկանալ, թե այդ գործիքակազմն արդյո՞ք բավարար է լուծելու բոլոր խնդիրները, որոնց թվում կարևոր տեղ է զբաղեցնում սոցգործընկերների և, հատկապես, գործատուների հետ համագործակցությունը:

«Իհարկե, նրանք ներգրավված են չափորոշիչների մշակման, կառավարման խորհուրդների, ինչպես նաև ոլորտի քաղաքականության մշակման գործընթացում՝ ի դեմս ՄԿՈՒՀԱԽ-ի, սակայն համակարգային առումով այդ համագործակցությունը չի կարելի բավարար գնահատել: Դրա համար, անկասկած, կան տարբեր պատճառներ, որոնցից ամենակարևորը տնտեսության վիճակն է և տարբեր ոլորտներում տնտեսվարող սուբյեկտների անցած ճանապարհը: ՄԿՈՒ համակարգը, սակայն, կարող է խթանող դեր ունենալ և փոխշահավետ լինել ուսհաստատությունների և գործատուների համար՝ նպաստելով երկուստեք զարգացմանը: Հետևաբար, նմանատիպ քննարկումներով ցանկանում ենք հասկանալ, թե առկա գործիքակազմերով ինչպես առավել արդյունավետ դարձնել նախատեսվող համակարգային փոփոխությունները»,- շեշտել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ այս ամենը պետք է փոխկապակցել նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների հետ:

Աշխատաժողովի մասնակցներին ողջունել է նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ **Դավիթ Սահակյանը՝** ընդգծելով, որ ԲՏԱ նախարարությունը կարևորում է Հայաստանում ՄԿՈՒ ոլորտի զարգացումը: Նա տեղեկացրել է, որ ներկայում մշակվում է տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում կարիքների բացահայտման և սահմանման ճանապարհայի քարտեզ՝ այդ հարցում ակնկալելով սերտ համագործակցություն ԿՄՍ նախարարության հետ:

«Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Վարդուհի Դադունցն իր հերթին նշել է, որ քննարկման արդյունքում նախատեսվում է վերհանել այն բոլոր մարտահրավերները, որոնք խոչընդոտում են ՄԿՈՒ ոլորտի զարգացմանը, որին վերջին տարվա ընթացքում գումարվել են նաև համավարակով պայմանավորված դժվարությունները: Նա վստահություն է հայտնել, որ արդյունավետ քննարկման արդյունքում մասնակիցները կգտնեն այն ռազմավարական լուծումները, որոնց ուղղությամբ առաջիկա տարիներին համատեղ կաշխատեն պետական կառույցները, գործատուները և դոնոր կազմակերպությունները: *«Մենք աջակցում ենք Շիրակի մարզում ագրո և տեքստիլ ոլորտների կրթության որակի բարելավմանը՝ կարևորելով գործատուների հետ սերտ համագործակցությունն աշխատանքի վրա հիմնված մոդելի կիրառմամբ՝ ի նպաստ հմուտ մասնագետների պատրաստմանը: Վստահ ենք, որ դրական փոփոխություններն առաջիկայում նկատելի կլինեն և կդառնան զարգացման մոդել նաև ՀՀ մյուս մարզերի ՄԿՈՒ հաստատությունների համար»,-* ասել է նա:

Աշխատաժողովի ընթացքում մասնակիցները հանդես են եկել զեկույցներով: Մասնավորապես՝ ներկայացվել են ՄԿՈՒ համակարգի մարտահրավերներն ու գործատուների ներգրավվածության լավագույն փորձը, բացահայտվել աշխատաշուկայի և կրթության կապերի զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև նախանշվել զարգացման այն ուղղություններն ու մեխանիզմները, որոնք կնպաստեն Հայաստանում տնտեսության և տարածքային համաչափ զարգացմանը, մրցունակ կադրերի պատրաստմանը և աղքատության հաղթահարմանը: Համաժողովի առաջնահերթություններից էր նաև կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը, հետագա ծրագրերի սինխրոնացումն ու համագործակցային նոր հնարավորությունների ուրվագծումը:

Երկօրյա աշխատաժողովը Եվրոպական միության ֆինանսավորմամբ և *«Մարդը կարիքի մեջ»* ՀԿ-ի կողմից իրականացվող *«Անցում կրթությունից՝ աշխատաշուկա»* ծրագրի մաս է կազմում:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հրապարակվել են ուսուցիչների կամավոր ատեստավորման ուղեցույցները

Գնահատման և թեստավորման կենտրոնը սկսել է ուսուցչի սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման քննության ուղեցույցների հրապարակման գործընթացը: ԳԹԿ կայքում արդեն հասանելի են *«Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն»* և *«Կենսաբանություն»* առարկաների ուղեցույցները՝ https://bit.ly/3eSQUTr:

Ուղեցույցները պատկերացում են տալիս՝ ինչպիսի հարցեր և պատասխաններ է ենթադրում գիտելիքների ստուգման գործընթացը: Դրանցում ներկայացված են թեստերի կառուցվածքը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների նմուշ-օրինակները, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը, ինչպես նաև առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Թեստերի կազմման համար հիմք են ընդունվել հանրակրթական դպրոցի վերոնշյալ առարկաների ծրագրերը:

Արցախ

Արեւաշող Ազնավուրը հայոց արեւելքում

Աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի ծննդյան օրն Արցախում նշանավորվեց նրա կիսանդրու բացման հանդիսությամբ: Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի մերձակա հայ-ֆրանսիական բարեկամության պուրակում է տեղադրվել կիսանդրին՝ այս կերպ նաև միահյուս ներկայացնելու մեծ հային ու մեծ ֆրանսիացուն: Երկու ժողովուրդներին զավակի սիրով ու խոնարհումով փառաբանելու հավատամքով է նա իր երգը ներկայացրել աշխարհի չորս ծագերում՝ սրբազան պատգամի պես պահերով սեփական ինքնության ազգային և համամարդկային երանգները: Իսկ այդ երանգներն անսահման են նրա երգերի հանրահռչակում:

Պատերազմի դաժան հետևանքները կրող Արցախում արտառոց չէր մեծանուն հայրորդու ներկայության նման արտահայտությունը: Արցախում շատ վառ են նրա այցի հետ կապված հիշողությունները,իսկ Ստեփանակերտում Ազնավուրի կիսանդրին ունենալու գաղափարն առաջ է քաշվել տարիներ առաջ: Հատկանշական է, որ պատերազմից վիրավոր Արցախում հառնող կիսանդրուց մեզ է նայում... ժպտացող և արևաշող Ազնավուրը...

Քանդակագործ **Յուրի Հովհաննիսյանի** խոսքով՝ քննության առնված կերպարներից ընտրել են հենց ժպտացող տարբերակը: *«Շատ բարդ էր ստեղծել Ազնավուրի կերպարը, որովհետև ինքն այնքան հարուստ էր իր ապրած կյանքով,որ ձգտել ենք նրա կերպարը չծանրաբեռնել ավելորդություններով»,*- ասաց Յ.Հովհաննիսյանը:

Ճարտարապետ **Մամիկոն Ֆարսյանը** լրացնում է գործընկերոջ խոսքն այսպես. *«Ուզում ենք, որ հայ ժողովրդի համար այս ծանր իրավիճակում Ազնավուրի ժպիտը գալիքի համար լինի խորհրդանշական»:*

Հանդիսավոր արարողությունը մարդաշատ էր. ներկա էին ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ: Կիսանդրու բացման պատիվը տրվեց քանդակագործ Յ.Հովհաննիսյանին և Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն **Արմեն Հովսեփյանին:** Հնչած ելույթներում խոսվեց մեծանուն երգչի արմատների, դժվարընթաց կենսագրության, մեծ բեմերում ունեցած նվաճումների մասին: Ներկաները ծաղիկներ խանարհեցին կիսանդրու պատվանդանին:

Ազնավուրյան երգերի կատարումներով և պարային ծրագրով հանդես եկան *«Արցախի բալիկներ»* և Արցախի պետական պարային համույթները:

Ստեփանակերտյան հանդիսությունն իր արձագանքն ունեցավ Ֆրանսիայում: Կիսանդրու բացման առթիվ Ազնավուրի որդին, *«Ազնավուր»* հիմնադրամի խորհրդի նախագահ **Նիկոլա Ազնավուրն** իր և ընտանիքի անունից շնորհակալություն է հայտնել: *«Հայրս շատ էր սիրում Արցախը, նա շատ լավ հիշողություններ ուներ Գանձասար, Վանք և այլ գեղեցիկ վայրեր կատարած շրջագայությունից:*

«Ազնավուր» հիմնադրամը 2020-ի սեպտեմբերից մասնակցել է Արցախին և պատերազմից տուժած բնակիչներին նվիրված մարդասիրական առաքելությանը, ինչը կաներ ինքը՝ Շառլ Ազնավուրը: Ներկայումս մենք շարունակում ենք իրականացնել նախագծեր, որոնք

կօգնեն ժողովրդին դիմակայել պատերազմի հետևանքներին»,- ասված է Նիկոլա Ազնավուրի շնորհակալագրում:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից

Շնորհավորում ենք

Վաստակին արժանի

Կրթության և գիտության ոլորտում ունեցած զգալի ավանդի, Հայաստանում հոգեբանական գիտության զարգացման և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ Հայ-ռուսական համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, ՀՌՀ Հումանիտար գիտությունների ինստիտուտի *«Հոգեբանություն»* մասնագիտության ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ասյա Բերբերյանը** պարգևատրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության մեդալով:

Նախարարության բարձրագույն պարգևն Ասյա Բերբերյանին հանձնել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը:**

«Մաղթում եմ, որ շարունակեք Ձեր արդյունավետ աշխատանքը և առավել զգալի ներդրում ունենաք հոգեբանական գիտության դերի բարձրացման գործում ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհում»,- նշել է Կարեն Թռչունյանը՝ շնորհավորելով վերջինիս 60-ամյակը:

Ասյա Բերբերյանն արժանացել է նաև Հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի բարձրագույն պարգևին, որը շնորհել է ՌԴ Յարոսլավի պետական համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, վերոնշյալ ակադեմիայի նախագահ **Վլադիմիր Կոզլովը:** Նա շնորհավորել է Ասյա Բերբերյանին՝ շեշտելով, որ վերջինիս դերն անգնահատելի է միջազգային կապերի զարգացման և հոգեբանության ոլորտում ներդրած մեծ ավանդի գործում:

Ասյա Բերբերյանն իրեն նմանօրինակ պարգևի արժանացնելու համար շնորհակալություն է հայտնել ԿԳՄՍ նախարարությանը և Հայ-ռուսական համալսարանի ղեկավարությանը:

«Այս աշխարհում ամեն ինչ օրինաչափ է, ուստի պատահական չէ, որ ուղիղ 10 տարի առաջ հոգեբանական գիտությունների դոկտորի աստիճան ինձ շնորհել է այն ժամանակվա ԲՈԿ-ի նախագահ Արմեն Թռչունյանը, իսկ այսօր ԿԳՄՍՆ պարգևը հանձնում է նրա որդին՝ Կարեն Թռչունյանը: Վստահ եմ, որ այս պարգևը կհանդիսանա նոր նվաճումների խթան և մասնագիտական կադրերի պատրաստման նոր առաքելություն՝ ի շահ մեր բուհի, երկրի և հզոր գիտության՝ հոգեբանության զարգացման»,- ասել է Ասյա Բերբերյանը՝ հատուկ շնորհակալություն հայտնելով բուհի ռեկտոր Արմեն Դարբինյանին և մյուս բուհերի իր գործընկերներին, որոնց միջոցով Հայաստանում հոգեբանությունը զարգացում է ապրում:

14.000 առաջին դասարանցի

սկիզբը՝ էջ 1

Տվյալների ստուգմանը կհաջորդի բուն հայտագրման փուլը, որը հունիսի 1-ից կսկսվի hayt.emis.am համակարգի միջոցով: Առաջին փուլում մինչև հունիսի 10-ը կհայտագրվեն այն երեխաները, որոնց ծնողներից մեկը տվյալ դպրոցի աշխատակից է, կամ երեխան ունի տվյալ դպրոցում արդեն սովորող քույր կամ եղբայր: Հունիսի 11-ից համակարգը բաց կլինի բոլոր հայտատուների համար: Առցանց հայտագրման գործընթացը պարտադիր է ՀՀ բոլոր այն դպրոցների համար, որոնք տվյալ բնակավայրում միակը չեն:

«Երեխայի և ծնողների տվյալները նախապես չստուգելու պարագայում բուն գրանցման օրը կարող են խնդիրներ լինել: Օրինակ՝ կարող է պարզվել, որ երեխայի կամ ծնողի փաստաթուղթը թվայնացված չէ: Այդ պարագայում համակարգը չի կարող գտնել ծնող-երեխա կապը ու թույլ չի տա գրանցվել: Տվյալները ստուգելու խնդիրը դրվել է հնարավոր չարաշահումներից զերծ մնալու նպատակով»,- նշել է Ա. Պողոսյանը:

Անդրադառնալով համակարգի գործունեությանն առնչվող հնարավոր խնդիրներին՝ Արտակ Պողոսյանը փաստել է՝ և՛ տվյալների ստուգման, և՛ հայտագրման կայքերն աշխատել ու աշխատում են անխափան: Այլ հարց է, որ կան դպրոցներ, որտեղ տեղերը համալրվում են շատ արագ՝ ընդհուպ համակարգը բացվելուց 40 վայրկյան անց արդեն տեղ չի լինում. *«Այդ հսկայական հոսքի դեպքում անգամ գրանցման կայքն աշխատել է առանց խոչընդոտների»:*

Ամեն դեպքում, երբ որևէ դպրոցում տեղերը սպառվում են, և ծնողը չի հասցնում գրանցվել, պետք է մեկ այլ դպրոց ընտրել, որտեղ դեռևս տեղերը սպառված չեն:

Արտակ Պողոսյանը նշել է, որ մայիսի 24-ից տվյալների ստուգման և հայտագրման կայքերը հասանելի կլինեն նաև այլ երկրներում գտնվողների համար:

«Եթե դրսում եք, կարող եք ձեր տվյալները փոխանցել Հայաստանում գտնվող ձեր ծանոթին, և նա ստուգի երեխայի տվյալները: Դրանից բացի՝ այսօրվանից կայքերը հասանելի կլինեն դրսում գտնվող ծնողների համար: Կարող են և՛ տվյալները ստուգել, և՛ սահմանված ժամկետներում հայտագրել: Թեպետ այստեղ մի բան կցանկանայի ընդգծել ու դիմել արտերկրում գտնվող ծնողներին. եթե վստահ չեք, որ մինչև սեպտեմբեր կգաք Հայաստան, խնդրում եմ, մի՛ հայտագրեք երեխաներին, որովհետև հետո դա մեծ խնդիրներ է առաջացնում դպրոցի տնօրենի համար: Տնօրենը չգիտի ինչ անել այդ տվյալների հետ՝ հրամանագրել երեխային առաջին դասարան, թե չհրամանագրել: Բացի դրանից՝ նկատի ունեցեք, որ այդ դեպքում դուք զբաղեցնում եք մեկ այլ երեխայի տեղը»,- նշել է նա:

Արտակ Պողոսյանի խոսքով՝ հայտագրման առցանց գործընթացի նպատակը ի սկզբանե եղել է տարիներ ի վեր ծառացած խնդրի լուծումը, այն է՝ դպրոցի ընտրության հարցում բոլորի համար ապահովել մեկնարկային հավասար հնարավորություններ. *«Նախ՝ այս համակարգով որևէ միջանձնային հարաբերությունների պատճառով ծնողին մերժելու հանգամանքը վերացել է: Նախկինում ծնողը գնում էր դպրոց, որտեղ իրեն ասվում էր, թե տեղ չկա երեխային ընդունելու համար: Հարց է՝ իրապես տեղ չկար, թե այդպես ասվում էր ծանոթ-բարեկամների երեխաներին տեղավորելու համար: Առցանց համակարգով ծնողը պարզ տեսնում է, թե որտեղ տեղ կա, որտեղ՝ ոչ: Դրանից բացի՝ լինում էին դեպքեր, երբ դպրոցները լիցենզիայով սահմանված քանակից ավելի երեխաներ էին ընդունում: Ընդ որում՝ երբեմն ստիպված էին այդ քայլին գնում: Այս համակարգը հնարավորություն չի տալիս լիցենզիայում սահմանված տեղերից ավելի երեխա ընդունել: Այսինքն՝ ի սկզբանե հնարավոր չէ խախտել լիցենզավորման կարգը»:*

Արտակ Պողոսյանը նաև փաստել է, որ առաջին դասարանցիների ընդունելության առցանց համակարգի գործարկման արդյունքներն արդեն նկատելի են: Անցած երկու տարվա վերլուծությունը ցույց է տալիս, որ Երևանում և մյուս քաղաքային համայնքների նախկին գերծանրաբեռնված դպրոցներում որոշակի բեռնաթափում կա:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բարեփոխումներ

Քննարկումների առանցքում բուհերի ֆինանսավորման նոր մոդելի մշակումն է

Կրթության, գիության, մշակույթի և սպորտի նախարարությունում փոխնախարար **Կարեն Թռչունյանի** գլխավորությամբ քննարկումների շարք է սկսվել՝ բուհերում ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Նախորդ շաբաթ այդպիսի երկու քննարկում է տեղի ունեցել:

Գոյություն ունեցող մոդելը չի բավարարում ժամանակակից պահանջներին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում Կարեն Թռչունյանի հրավիրած աշխատանքային խորհրդակցությանը մասնակցել են բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, պրոռեկտորներ և այլ պատասխանատուներ, նախարարության բարձրագույն կրթության, ֆինանսական և զարգացման ոլորտների համակարգմամբ զբաղվող ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

Նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանն ընդգծել է, որ բարձրագույն կրթության բարեփոխումների արդյունավետության և ոլորտի զարգացման հիմքը ֆինանսավորման նոր մոդելների մշակումն է:

«Գոյություն ունեցող ֆինանսավորման մոդելը որակյալ և մրցունակ մասնագետ պատրաստելու ժամանակակից պահանջներին չի բավարարում»,- ընդգծելով ֆինանսավորման խնդրի առաջնահերթությունը՝ փաստել է նախարարի տեղակալն ու հավելել, որ ներկայումս բուհերի ֆինանսավորման 90-95 տոկոս և ավելի չափաբաժինը ձևավորվում է ուսանողների վարձավճարներից: Մի դեպքում ուսանողի կրթության համար վճարում է պետությունը՝ բուհին հատկացնելով որոշակի տեղեր պետական պատվերի շրջանակում, մեկ այլ դեպքում՝ ուսանողը կամ որևէ մասնավոր, բարեգործական կազմակերպություն, որը ստանձնում է բուհում սովորողի ուսման վարձի հատուցման գործառույթը: Սակայն, բոլոր դեպքերում, բուհերը, բացի ուսման վարձից, ֆինանսական այլ աղբյուրներ գրեթե չունեն, ինչը, ըստ նախարարի տեղակալի, արդյունավետ մոտեցում չէ բուհի զարգացման և որակյալ կրթության ապահովման տեսանկյունից:

Բուհերը ֆինանսական կախվածություն ունեն ուսանողից

«Բուհերը, ըստ էության, ֆինանսական կախվածություն ունեն ուսանողների քանակից, քանի որ ուսանողները համարվում են նրանց ֆինանսավորման հիմնական և գլխավոր աղբյուրը, ինչը հաճախ բացասաբար է անդրադառնում կրթության որակի վրա»,- նշել է Կ. Թռչունյանը:

Նա կարևորել է օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման նոր աղբյուրների ներգրավումը բուհերի բյուջեներում և բուհերին առաջարկել է այդ առումով լինել նախաձեռնող: Նրա խոսքով՝ բարձրագույն կրթության բարեփոխումների և նախատեսվող նոր իրավական կարգավորումների մեջ ֆինանսավորման մի քանի բաղադրիչ է առանձնացվել: Կարևոր խնդիրներ են նաև առկա վիճակի գնահատումն ու վերլուծությունը, որոնցից կարող են բխել նաև ֆինանսավորման նոր մեխանիզմների վերաբերյալ իրատեսական առաջարկների ուղղությամբ համակարգված աշխատանքները:

Հանդիպման ընթացքում ուսումնական հաստատությունների պատասխանատուները ներկայացրել են իրենց բուհերում գործող ֆինանսավորման բանաձևերը, մասնավորապես, ըստ ուսանողների և դասախոսների թվի հարաբերակցության և մի քանի այլ գործակիցներ: Բուհերի ներկայացուցիչները բարձրացրել են նաև մի շարք հարցեր՝ բուհական տարբեր մասնագիտությունների համար պետական պատվերի շրջանակում պետության սահմանած ուսման վարձի չափի, պետպատվերի տեղերի բաշխման, անվճար տեղերն ըստ ուսանողների սոցիալական վիճակի նպատակային հատկացման և մի շարք այլ խնդիրների առնչությամբ:

Առցանց քննարկում՝ ԵՄ TAIEX ծրագրի շրջանակում

Հաջորդ քննարկումը տեղի է ունեցել առցանց հարթակում: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանի մասնակցությամբ տեղի ունեցած երկօրյա առցանց աշխատաժողովում քննարկվել են բուհերում ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրմանը վերաբերող հարցեր, կարևորվել է միջազգային փորձը:

Աշխատաժողովը կազմակերպվել է Եվրոպական միության տեխնիկական օժանդակության և տեղեկատվության փոխանակման TAIEX ծրագրի փորձագիտական առաքելության շրջանակում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ:

Աշխատաժողովին մասնակցել են ԵՄ ներկայացուցիչներ՝ Եվրոպական համալսարանների ասոցիացիայի ֆինանսական հարցերով տնօրեն **Թոմաս էսթերմանը,** Ավստրիայի կրթության, գիտության և հետազոտության դաշնային նախարարության ներկայացուցիչ **Ալեքսանդր Փոլ Կոհլերը,** Նիդեռլանդների համալսարանների ասոցիացիայի ներկայացուցիչ **Վիկտոր Մայերը,** ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, զարգացման ծրագրերի և մոնիթորինգի, ֆինանսաբյուջետային վարչությունների և ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների մի շարք պատասխանատուներ:

Կարևորելով բուհերի սուղ ֆինանսների արդյունավետ օգտագործումը

Բացման խոսքում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը նշել է, որ աշխատաժողովի նպատակն է աջակցել ՀՀ բուհերում ֆինանսավորման նոր բանաձևի մշակմանն ու ներդրմանը՝ հաշվի առնելով ԵՄ անդամ երկրների լավագույն փորձը:

Համավարակի և պատերազմական իրավիճակի պատճառով հետաձգված ծրագիրը դիտարկվում է որպես ՀՀ-ում բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բարեփոխումների բաղադրիչ:

Բուհերի և ուսանողների ֆինանսավորման նոր մեթոդաբանության մշակման աշխատանքները բարեփոխումների առանցքային կետերից են, որոնք համապատասխան իրավական կարգավորումներ են ստացել Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած՝ *«Բարձրագույն կրթության և գիտության մասին»* օրենքի նախագծում:

«Բարձրագույն ուսումնական հաստատություններում ճիշտ ֆինանսավորման մեխանիզմների ներդրումն առաջնային խնդիր է, քանի որ դրանից են կախված կրթության որակն ու արդյունավետությունը»,- ընդգծել է Կարեն Թռչունյանը՝ փաստելով, որ Հայաստանում գործող բուհերից որոշներն ունեն ընդհանուր, որոշներն էլ նեղ մասնագիտական ուղղվածություն, ինչպիսիք են, օրինակ, Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանը կամ Ագրարային համալսարանը: Հետևաբար, կարևոր է հասկանալ, թե յուրաքանչյուր տեսակի համալսարանի համար ֆինանսավորման որ մեխանիզմն է ավելի արդյունավետ:

«Լինելով զարգացող երկիր՝ Հայաստանը առավելագույնս կարևորում է բուհերի, առանց այդ էլ սուղ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը: Այս տարիներին մենք համոզվել ենք, որ 21-րդ դարում համալսարաններում իրավիճակի ու կրթական միջավայրի նոր պահանջներ են ձևավորվել, որոնք էականորեն տարբերվում են նախորդ՝ 20-րդ դարի պահանջներից. գիտությունը զարգանում է նոր տեմպով, ուսանողներն են տարբեր, անընդհատ փոփոխվում է աշխատաշուկան: Պետք է հասկանալ, թե ինչպես զարգացնել ուսանողների քննական և քննադատական մտածողությունը, ինչպես ձևավորել սովորելու, նախաձեռնելու, ստեղծարար լինելու և արժեքներ ձևավորելու մոտիվացիա: Սրանք խնդիրներ են, որոնք ևս պետք է հաշվի առնվեն բուհերի պետական և հանրային ֆինանսավորման մոտեցումներում»,- ընդգծել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը՝ հավելելով, որ պետք է մշակել գործողությունների ճանապարհային քարտեզ, որը կօգնի գտնել լավագույն լուծումները:

Ներկայացվել է ԵՄ երկրների փորձը՝ մեծացել է ճնշումը պետական ֆինանսների ուղղությամբ

Աշխատաժողովին զեկույցով հանդես է եկել Եվրոպական համալսարանների ասոցիացիայի ղեկավար Թոմաս էսթերմանը: Նա հանդիպման մասնակիցներին ներկայացրել է նաև ԵՄ *«Տեմպուս ԱԹԵՆԱ»* ծրագրի շրջանակում ասոցիացիայի իրականացրած մշտադիտարկումների արդյունքները՝ Հայաստանի բուհերում գործող ֆինանսավորման մոդելների, համավարակի հետևանքով ստեղծված նոր իրավիճակի և այլ խնդիրների մասին: Առանձնացնելով առաջնային մարտահրավերները՝ էսթերմանը նկատել է, որ իրենց կատարած մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս՝ վերջին տասնամյակում մեծացել է ճնշումը պետական ֆինանսավորում ստացող հաստատությունների վրա, ինչն արդեն միջազգային տարածված փորձի ցուցիչ է: Ֆինանսական ռեսուրսի դիմաց արժեք ստեղծելու աճող պահանջարկ կա, մեծ է ակնկալիքը, որ համալսարաններն իրենց գործունեության մեջ կլինեն թափանցիկ և հաշվետու, հատկապես երբ ֆինանսավորվում են պետական միջոցներից:

Բանախոսն առանձնացրել է թվայնացման միտումները, որը մեծ զարգացում է ապրել վերջին մեկ տարվա ընթացքում: Համավարակի պայմաններում թե՛ դասավանդման, թե՛ բուհերի ներքին կառավարչական և վարչարարության աշխատանքները տեղափոխվել են թվային ոլորտ և հիմնականում առցանց են կատարվում:

Աշխատաժողովի ընթացքում Նիդեռլանդների համալսարանների ասոցիացիայի ներկայացուցիչ Վիկտոր Մայերը և Ավստրիայի կրթության, գիտության և հետազոտության դաշնային նախարարության ներկայացուցիչ Ալեքսանդր Փոլ Կոհլերը ներկայացրել են համապատասխանաբար Նիդեռլանդների և Ավստրիայի համալսարանների ֆինանսավորման փորձը: Աշխատաժողովի մասնակիցները հարցեր են ուղղել բանախոսներին՝ բուհերի հանրային ֆինանսավորման արդյունավետության, հետազոտական, նորարարական, ձեռնարկատիրական գործունեության մեջ ընդգրկվածության, հանրային ու մասնավոր ոլորտների հետ համագործակցության և այլ խնդիրների վերաբերյալ:

Բուհերի ֆինանսավորման խնդիրների շուրջ քննարկումները լինելու են շարունակական:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



2020-2021 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգ

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թ. մայիսի 18-ի N 785-Ա/2 հրամանի հավելված 1-ի

1. Սույն աշխատակարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետեւ՝ Հաստատություն) 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարաններում ավարտական եւ կենտրոնացված ավարտական եւ 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը եւ բողոքարկումը:

2. Հաստատությունների **4-րդ դասարաններում** անցկացվում է գիտելիքների ստուգում՝ **հունիսի 22-ից հուլիսի 3-ը**՝ համաձայն հավելված 2-ի ***(տես՝ էջ 7):***

3. Հաստատությունների **9-րդ դասարաններում** անցկացվում են կենտրոնացված ավարտական քննություն ***«Հայոց լեզու»*** առարկայից՝ **հունիսի 30-ին,** ավարտական քննություններ՝ **հունիսի 21-ից հուլիսի 5-ը**՝ համաձայն հավելված 2-ի ***(տես՝ էջ 7):***

4. Հաստատությունների **12-րդ դասարաններում** անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ **դեկտեմբերի 21-26-ը** կամ **հունիսի 9-23-ը**՝ համաձայն հավելված 2-ի ***(տես՝ էջ 7):***

5. 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին կարող է հանձնել այն առարկայի(ների) պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել եւ չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում:

6. Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով:

7. Միեւնույն առարկայից եւ միասնական, եւ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում գրվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):

8. Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչեւ դեկտեմբերի 1-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 1-ից մինչեւ 8-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է *«Գնահատման եւ թեստավորման կենտրոն»* ՊՈԱԿ (այսուհետեւ՝ ԳԹԿ):

9. 12-րդ դասարանի հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակը, ըստ առարկաների, հաստատության տնօրենը նույն ձեւով լրացնում եւ ԳԹԿ է փոխանցում **ապրիլի 1-ից մինչեւ մայիսի 1-ը:**

10. 9-րդ դասարանի կենտրոնացված եւ ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերը եւ ցուցակ-հայտերը հաստատության տնօրենը լրացնում եւ ԳԹԿ է փոխանցում **փետրվարի 10-ից մինչեւ մարտի 10-ը:**

11. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդներին թույլատրվում է մասնակցել քննության՝ համաձայն կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հաստատած անվանացանկի: Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը զրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:

12. Ավարտական եւ պետական ավարտական քննությունները սկսվում են ժամը **10:00-ին:** Սովորողները ուսումնական հաստատություն են ներկայանում ժամը **9:00-ին:**

13. Կենտրոնացված ավարտական քննությունը սկսվում է ժամը **11:00-ին:** Սովորողները քննական կենտրոններ են ներկայանում ժամը **10:00-ին:**

14. Քննությունների միջեւ ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով.

15. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.

1) ***«Մայրենի»*** *առարկայից՝ գրավոր (թեստ). քննությանը տրվում է* ***60 րոպե****:*

2) ***«Մաթեմատիկա»*** *առարկայից՝ գրավոր (թեստ). քննությանը տրվում է* ***60 րոպե****:*

*3) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար նաեւ՝ «****Ռուսաց լեզու»*** *առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:*

4) Ազգային փոքրամասնությունների դասարաններում նաեւ՝ ***«Մայրենի լեզու եւ գրականություն»*** *առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:*

5) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների ցանկության դեպքում ***«Մաթեմատիկա»*** *առարկայի թեստերը թարգմանվում են ռուսերեն:*

6) Գիտելիքների ստուգման առաջադրանքները (առնվազն 4 տարբերակ) կազմում են Հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված եւ Հաստատությունում գործածվող դասագրքերից:

7) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքները, կնքում եւ ծրարում: Ծրարներից մեկը բացվում է գիտելիքների ստուգման օրը՝ քննասենյակում, սովորողների ներկայությամբ:

8) Գրավոր աշխատանքը գնահատվում է ***10 միավորային*** *համակարգով:*

9) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը եւ տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:

10) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ տրվում է լրացուցիչ ***40 րոպե****՝ ապահովելով սովորողի կարիքին համապատասխան պայմաններ:*

16. 4-րդ, 9-րդ եւ 12-րդ դասարաններում անցկացվող ***«Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն»*** (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ համապատասխան դասարանների համար) եւ ***«Մայրենի լեզու եւ գրականություն»*** (բանավոր, ազգային փոքրամասնությունների համար) առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը եւ հարցատոմսերը կազմում են տվյալ Հաստատության առարկայական մեթոդական միավորումները՝ Նախարարության կողմից երաշխավորված դասագրքերի եւ նյութերի հիման վրա:

17. 9-րդ դասարանում ավարտական, կենտրոնացված ավարտական քննական թեստերի առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքներն ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված եւ Հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից:

18. 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքներն ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից եւ Հաստատությունում գործածվող դասագրքերից կամ **ձեռնարկներից:**

19. ***«Ֆիզկուլտուրա»*** առարկայի **9-րդ դասարանում** ավարտական քննությունը, **12-րդ դասարանում** ամփոփիչ ստուգարքը ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետեւյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ եւ հանձնաժողովի երկու անդամներ:

20. 9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ.

1) ***«Հայոց լեզու»*** *առարկայից՝ գրավոր (կենտրոնացված, թեստ). քննության տեւողությունը՝* ***120 րոպե****:*

2) ***«Գրականություն»*** *առարկայից՝ բանավոր:*

3) ***«Հայոց պատմություն»*** *առարկայից՝ բանավոր:*

4) ***«Մաթեմատիկա»*** *առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝* ***120 րոպե****:*

5) ***«Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»****՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝* ***120 րոպե****:*

6) ***«Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»*** *եւ այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ բանավոր:*

7) ***«Ֆիզկուլտուրա»*** *առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում):*

8) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար սահմանված գիտելիքների ստուգում անցկացվում է նաեւ ***«Ռուս գրականություն»*** *առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:*

9) Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար անցկացվում է նաեւ գիտելիքների ստուգում՝ ***«Մայրենի լեզու եւ գրականություն»*** *առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:*

21. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար ***«Մաթեմատիկա»*** առարկայի եւ ***«Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»)*** առարկաների ավարտական քննությունների թեստերը սովորողի ցանկության դեպքում թարգմանվում են ռուսերեն:

22. Հատուկ հանրակրթական դպրոցներում սովորող երեխաները ***«Հայոց լեզու»*** կենտրոնացված ավարտական քննությունը հանձնում են իրենց դպրոցներում՝ սույն աշխատակարգի պահանջներին համապատասխան:

23. Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ***«Հայոց լեզու»*** առարկայի կենտրոնացված ավարտական քննությունը կարող են հանձնել իրենց հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողի ընտրության:

24. 9-րդ դասարանում բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու եւ գնահատելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են հաստատության տնօրենը կամ նրա նշանակած ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ) եւ ընթերական (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ).

1) սովորողները քննասենյակ են մտնում ցուցակում իրենց անունների հերթականությանը համապատասխան,

2) սովորողների ցուցակում սովորողն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում է քննատոմսը,

3) քննատոմսը ընտրելուց հետո սովորողը քննասենյակում ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը եւ դրանց պատասխանները,

4) Սովորողի պատասխանը գնահատվում է ***20 միավորանոց*** *համակարգով:*

25. ***«Գրականություն», «Հայոց պատմություն»*** եւ ***«Օտար լեզու»*** առարկաների **9-րդ դասարանների** ավարտական քննությունների տոմսերը կազմում են Հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված եւ տրամադրված հարցաշարերի եւ տոմսերի նմուշների: ***«Գրականություն»*** եւ ***«Օտար լեզու»*** առարկաների ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը եւ տոմսերի նմուշները կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, ***«Հայոց պատմություն»*** առարկայի քննական առաջադրանքները՝ 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:

26. 9-րդ դասարանում ***«Մաթեմատիկա»*** եւ ***«Բնագիտություն»*** առարկաների ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման, ստուգման եւ բողոքարկման ընթացակարգը սահմանվում է՝ սույն աշխատակարգի 29-76-րդ կետերի պահանջներին համապատասխան:

27. 12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ.

1) ***«Հայոց լեզու եւ հայ գրականություն»*** *առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝* ***120 րոպե****:*

2) ***«Հայոց պատմություն»*** *առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝* ***120 րոպե****:*

3) ***«Մաթեմատիկա»*** *առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝* ***120 րոպե****:*

4) ***«Ֆիզկուլտուրա»*** *առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգարք)՝ հունիսի 9-ից մինչեւ քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում:*

5) ***«Ռուս գրականություն»*** *առարկայից՝ բանավոր՝ (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) սովորողի ընտրությամբ՝ դեկտեմբերին կամ հունիսին՝ քննաշրջանի ընթացքում:*

6) ***«Մայրենի լեզու եւ գրականություն»*** *առարկայից բանավոր՝ (ազգային փոքրամասնությունների դասարանների համար)՝ սովորողի ընտրությամբ՝ դեկտեմբերին կամ հունիսին՝ քննաշրջանի ընթացքում:*

28. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՈՒՊ):

29. Ավարտական եւ պետական ավարտական քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ քննական կենտրոնի ղեկավարն է:

շարունակությունը՝ էջ 6

2020-2021 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգ

սկիզբը՝ էջ 5

30. Կենտրոնացված ավարտական քննությունը կազմակերպում եւ անցկացնում է ԳԹԿ-ն: Քննական կենտրոնների ցանկը, կենտրոնների ղեկավարների, ԳԹԿ ներկայացուցիչների, կազմակերպիչների եւ առարկայական հանձնաժողովների անդամների ցուցակը հաստատում է ԳԹԿ տնօրենը:

31. Ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպիչներին, օգնականներին, հերթապահներին նշանակում է քննական կենտրոնի ղեկավարը: Կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

32. Քննական կենտրոններում սովորողները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խմբում կորող է լինել ոչ ավելի, քան 20 սովորող՝ խստորեն պահպանելով հակահամաճարակային կանոնները և սոցիալական հեռավորությունը: Յուրաքանչյուր խմբի աշխատանքները համակարգում է 2 կազմակերպիչ:

33. Ավարտական, կենտրոնացված ավարտական եւ պետական ավարտական քննությունները անցկացվում են՝ սույն աշխատակարգի 29-76-րդ կետերի պահանջներին համապատասխան:

34. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

35. Քննական կենտրոնի ղեկավարը քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ կատարում է կազմակերպիչների գրանցում, ջերմաչափում եւ վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների:

36. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

37. Սովորողը քննություններին ներկայանում է դիմակով, անձը հաստատող փաստաթղթով (ծննդյան վկայական, անձնագիր, նույնականացման քարտ), կենտրոնացված ավարտական քննության մասնակիցները՝ անձնագրով կամ հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով եւ ԳԹԿ-ի կողմից տրված անցաթղթով, Մեդալի հավակնորդները՝ անձնագրով կամ հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով :

38. Սովորողը մոտենում է վիճակահանության սեղանին եւ վիճակահանության թերթիկի միջոցով ընտրում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում՝ *«նստարանի համարը»* սյունակում:

39. Քննասենյակում չի թույլատրվում տեղափոխություններ կատարել:

40. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցչից ստանում է քննական առաջադրանքների փաթեթները:

41. Քննությունը սկսվելուց առնվազն կես ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի առաջադրանքներից:

42. Քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական եւ այլ ուղեցույց-ձեռնարկներ:

43. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո, քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական առաջադրանքների ծրարները: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ եւ ամբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրար(ներ)ը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարան(ներ)ին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում՝ հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ:

44. Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաեւ բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց եւ սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են առաջադրանքները: Սովորողը, առաջադրանքը ստանալուն պես, շապիկի համապատասխան մասում գրում է խմբի եւ իր նստարանի համարը: Առաջադրանքների վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տեւողությունը եւ գրատախտակին նշում է քննության սկիզբը եւ ավարտը:

45. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ եւ միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

46. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում եւ հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպչին:

47. Առաջադրանքի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում:

48. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող առաջադրանքները փոխարինվում են նորով:

49. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից եւ կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության եւ ԳԹԿ-ի ներկայացուցիչները:

50. Քննության ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա եւ հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձեւաթղթերի վրա անցկացնելու մասին:

51. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախազգուշացված սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:

52. Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձեւաթղթի էջի վրա գրվում է՝ *«Հեռացված է քննությունից»:* Քննասենյակի եւ խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:

53. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր առաջադրանքը եւ ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել եւ, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:

54. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

55. Պատասխանատուն քննական աշխատանքները քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված քննական աշխատանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որեւէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (եթե կան):

56. Քննական գրավոր աշխատանքները, մինչեւ դրանց ստուգման ավարտը, պահպանվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:

57. Կենտրոնացված ավարտական քննությունից հետո պատասխանների ձեւաթուղթը ստուգում, գնահատում է առարկայական հանձնաժողովը, որի նախագահը աշխատանքների ավարտից հետո պատասխանների ձեւաթղթերը հանձնում է կենտրոնի ղեկավարին:

58. Կենտրոնացված ավարտական քննության քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցչի հետ փակ ծրարներից հանում են պատասխանների ձեւաթղթերի կտրված մասերը, նույնականացնում և յուրաքանչյուր աշակերտի պատասխանների ձեւաթղթերից գնահատականը փոխանցում սովորողների խմբերի գնահատման ցուցակ:

59. Ցուցակի ներքևի մասում ստորագրում են կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ ներկայացուցիչը և ստուգող հանձնաժողովի նախագահը:

60. Կենտրոնացված ավարտական քննական գնահատականները հրապարակվում են քննության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14:00-ն:

61. Քննական գնահատականների ցուցակները առանձնացվում են՝ ըստ քննություններին մասնակցած դպրոցների:

62. Ավարտական եւ պետական ավարտական քննական առաջադրանքները ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14:00-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված առաջադրանքների ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է:

63. 9-րդ դասարանում *«Մաթեմատիկա»* եւ ***«Բնագիտություն»*** առարկաների քննությունների ստուգող հանձնաժողովների անդամների 50%-ը տվյալ առարկաների մասնագետներ են:

64. 12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

65. Քննական արդյունքները գնահատելիս քննական հանձնաժողովի անդամների միջեւ տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

66. Քվեարկության արդյունքներում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝

1) ***4-րդ դասարանում՝*** *դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը,*

2) ***9-րդ եւ 12-րդ դասարաններում՝*** *քննական կամ առարկայական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը,*

3) նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ(ներ)ը արձանագրության մեջ կարող է(են) կատարել հատուկ նշում:

67. Ստուգումն իրականացվում է՝ ԳԹԿ-ի կողմից հաստատված եւ հրապարակված ***«Ցուցումներ»***-ի պահանջներին եւ գնահատման չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սեւագրությունը չի ստուգվում եւ չի գնահատվում:

68. Ավարտական եւ պետական ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14:00-ին: Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ:

69. Քննական կենտրոնում քննական գնահատականների ցուցակներն առանձնացվում են՝ ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

70. Բանավոր քննությունները ձայնագրվում կամ արձանագրվում են: Արձանագրության մեջ ներառվում են հարցատոմսի համարը, հարցերը, պատասխանները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները եւ տվյալ սովորողը:

71. Քննությունների կազմակերպման, անցկացման եւ արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝

1) քննության անցկացման կարգի խախտման մասին,

2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին:

72. Սույն աշխատակարգի 71-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին՝ քննության ավարտից անմիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում եւ պատասխանում է բողոքը ներկայացնողին:

73. Սույն աշխատակարգի 71-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են քննող հանձնաժողովի նախագահին՝ բանավոր քննության դեպքում՝ քննության պահին կամ մինչեւ քննասենյակից դուրս գալը, գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում՝ Հաստատության տնօրենին: Ավարտական եւ պետական ավարտական գրավոր քննության բողոքի արդյունքները, ոչ ուշ քան դիմումը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում է դիմողին: Կենտրոնացված ավարտական քննության գնահատականների վերաբերյալ բողոքը Հաստատության տնօրենը բողոքն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ:

74. Կենտրոնացված ավարտական քննության գնահատականի վերաբերյալ բողոքարկումը իրականացնում է մարզպետաչանի, Երեւանի քաղաքապետարանի կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը: Հանձնաժողովի աշխատանքներում ԳԹԿ ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է: Դիմում-բողոքների քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաեւ իջեցման մասին, որը հրապարակվում է:

75. Կենտրոնացված ավարտական քննության բողոքարկման արդյունքները առարկայական հանձնաժողովը հրապարակում է դիմում-բողոքները քննելու հաջորդ օրը:

76. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով՝ Նախարարություն եւ (կամ) դատարան:

2020-2021 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման ժամանակացույց

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թ. մայիսի 18-ի N 785-Ա/2 հրամանի հավելված 2-ի

4-րդ դասարան

Մայրենի՝ գրավոր (թեստ)՝ **22.06.2021թ.**
Մաթեմատիկա՝ գրավոր (թեստ)՝ **25.06.2021թ.**
Ռուսաց լեզու՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**
Մայրենի լեզու և գրականություն՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**

9-րդ դասարան

Հայոց պատմություն (բանավոր) **21.06.2021թ.**
Մաթեմատիկա (գրավոր, թեստ) **24.06.2021թ.**
Գրականություն (բանավոր) **28.06.2021թ.**
Հայոց լեզու (կենտրոնացված, գրավոր, թեստ) **30.06.2021թ.**
Բնագիտություն *(«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»*՝ սովորողի ընտրությամբ առարկայից՝ գրավոր, թեստ) **03.07.2021թ.**
Օտար լեզու *(«Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»,* այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր) **05.07.2021թ.**
Ֆիզկուլտուրա՝ նորմատիվների հանձնում՝ **հունիսի 21-ից մինչև քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում**
Ռուսաց լեզու՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**
Մայրենի լեզու և գրականություն առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**

12-րդ դասարան

Հայոց լեզու (գրավոր) **09.06.2021թ.**
Հայոց պատմություն (գրավոր) **16.06.2021թ.**
Մաթեմատիկա (գրավոր) **23.06.2021թ.**
Ռուսաց լեզու՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար **քննաշրջանի ընթացքում**
Մայրենի լեզու և գրականություն առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար **քննաշրջանի ընթացքում**

Չափորոշիչ

Աշխատանքային այցեր՝ փորձարկելու նպատակով

Հանրակրթության պետական չափորոշչի հիմքի վրա ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թվականի ապրիլի 30-ի համապատասխան հրամաններով հաստատվել են 2021-2022 ուսումնական տարվա առարկայական փորձնական չափորոշիչները և ծրագրերը՝ ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով:

Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ՝ *«Կրթության բարելավում»* վարկային ծրագրի *«Հանրակրթության որակի բարելավում՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով»* ենթաբաղադրիչի շրջանակում մշակվել են հետևյալ ուսումնական բնագավառների չափորոշիչները՝ հայոց լեզու, հայ գրականություն, հասարակական գիտություններ, օտար լեզուներ, արվեստ, ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն: ԿԳՄՍՆ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ն իրականացրել է հանրակրթական ուսուցչական անձնակազմերի վերապատրաստումներ, իսկ մասնագիտական աշխատանքային խմբերը մշակել են ուսումնական նյութեր:

Այդ աշխատանքների համատեքստում *«Կրթական ծրագրերի կենտրոն»*-ի վերանայած առարկայական չափորոշիչների և ծրագրերի փորձարկման նպատակով տեղի են ունեցել աշխատանքային այցեր Տավուշի մարզի 4 կրթական հաստատություններ:

Փորձագիտական խմբերը դասապրոցեսի դիտարկումներ են իրականացրել Իջևանի հիմնական, Թեղուտի, Ներքին Կարմիրաղբյուրի և Այգեձորի միջնակարգ դպրոցներում: ՕԻԳ-ի ձևավորած աշխատանքային խմբերում ներգրավված են ավելի քան 32 մասնագետներ, ովքեր մշակել են առարկայական չափորոշիչները և ուսումնական նյութերը:

Վերոնշյալ ուսումնական բնագավառների չափորոշիչների նախափորձարկումներ են նախատեսվում նաև ՀՀ Արագածոտնի և Երևանի մի շարք դպրոցներում: Այդ նպատակով ներկայում փորձագիտական խմբերը շրջայցեր են կատարում ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 1 հիմնական, ինչպես նաև Մուղնու, Բյուրականի և Կոշի միջնակարգ դպրոցներում:

Նշենք, որ առարկայական չափորոշիչներն անցել են հանրային և մասնագիտական քննարկումների տևական փուլ՝ ուսուցչական համայնքների և ոլորտի մասնագետների հետ: Ներկայացված բազմաթիվ առաջարկների հիման վրա դրանք շտկվել, խմբագրվել ու լրամշակվել են:

Վերապատրաստում

Ընթացքում ծանոթանում են ՏՀՏ գործիքներին

Աշակերտների կրթության անընդհատությունն ապահովելու նպատակով իրականացվող առցանց ուսուցումը ենթադրում է ՏՀՏ նոր գործիքներ և մոտեցումներ: ԿԳՄՍՆ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ը, հաշվի առնելով ներկա մարտահրավերները, շարունակում է իրականացնել հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստումներ՝ դասավանդման ընթացքում ՏՀՏ գործիքների կիրառումը խթանելու նպատակով: *«Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում»* ենթաբաղադրիչի շրջանակում իրականացվող հասցեական վերապատրաստումների ընթացքում այս տարի վերապատրաստվել են շուրջ 550 ուսուցիչներ: Հասցեական վերապատրաստումներն ընթանում են մի քանի փուլերով՝ ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերը և Երևանը: Վերապատրաստման հնգօրյա դասընթացների արդյունքում մանկավարժները տիրապետում են ՏՀՏ նոր գործիքների և ծանոթանում հետաքրքիր մուլտիմեդիա նյութերի ստեղծման առանձնահատկություններին:

Վերապատրաստումների արդյունքում Հեռավար ուսուցման համալիր էջում՝ https://heravar.armedu.am, ներառված է ՏՀՏ վերապատրաստումների մուդլ հարթակը՝ https://icttraining.armedu.am, որտեղ մեկտեղված են տարբեր առարկաների մեծաթիվ դասընթացներ: Դրանք պատրաստել են վերապատրաստումներ անցած մանկավարժները՝ ՏՀՏ գործիքների օգնությամբ: *«Կրթական ծրագրերի կենտրոնն»* ամենօրյա դիտարկման է ենթարկում այդ դասընթացները, որոնց ֆիլտրվում են և յուրաքանչյուր օր նորացվում: Հատկանշական է մայրաքաղաքում և մարզերում վերապատրաստումների կազմակերպման վայրի ընտրությունը: ՕԻԳ-ի ներկայացուցչի հավաստմամբ՝ դպրոցների ընտրությունը պայմանավորված է դրանց տեխնիկական հագեցվածությամբ: Վարկային նախորդ ծրագրի շրջանակում վերոնշյալ դպրոցներին *«Կրթական ծրագրերի կենտրոնը»* տրամադրել է անհրաժեշտ համակարգչային շարժական դասարաններ, որոնք ներառում են 22 դյուրակիր համակարգիչ՝ լոկալ ցանց ստեղծելու հնարավորությամբ, և ինտերակտիվ գրատախտակ:

Նշենք, որ վերապատրաստումները կրում են շարունակական բնույթ. մինչև տարեվերջ նախատեսվում է իրականացնել 1000-ից ավելի ուսուցիչների վերապատրաստում:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի միասնական ոգու հրաշակերտ հաղթանակը



1918 թվական, մայիս... դժնդակ, օրհասական, չարագույժ օրեր, հայ ժողովրդի մղած անօրինակ մաքառումների, հայ ժողովրդի Հայրենական մեծ պատերազմի օրեր, որոնք դարձան հայոց միասնական ոգու փայլատակման օրեր, ու այդ միասնականության երկունքով լույս աշխարհ եկան մեր անկոտրում կամքի եւ հավիտենականության մարմնացումը՝ Հաղթանակը եւ մեր դարավոր իղձն ու բաղձանքը՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը:

Զուլումի, մահտարաժամի օրեր էին: Արնածարավ ու հայաճարակ գազանը՝ բազմագլուխ վիշապ-հիդրայի կերպարանք առած թուրքական զորքը, զավթել էր Ալեքսանդրապոլը (Գյումրի) եւ օղակ-օղակ գալարվելով՝ շարժվում էր դեպի Արարատյան երկրի սիրտը: Իսկ որտեղ թուրքական բանակ ու թուրք խաժամուժ, այնտեղ ավերում, մահ ու կոտորած, այնտեղ արյան ծով ու արցունքի հեղեղ, ողբ ու սուգ, կական ու արյու՛ն, արյու՛ն, երկինք ու երկիր բոսորով պատված...

Կարսի գրավումից հետո ստեղծված թուրքական *«Կարս»* բանակային խմբավորումը՝ Յաղուբ Շեւքի փաշայի գլխավորությամբ, նպատակ ուներ նվաճել ամբողջ Արեւելյան Հայաստանը, դուրս գալ Բաքու, ապա Դաղստան ու անդրկասպյան երկրամասեր եւ իրականացնել Մեծ Թուրան ստեղծելու առաջին քայլը: Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքական զորքերի հրամանատարությունը կատարեց զորքերի վերադասավորում՝ ստեղծելով չորս զորախումբ:

Թուրքական առաջին զորախումբը (Կովկասյան 5-րդ հետեւակային դիվիզիան եւ երկրորդ զորակազմի առաջին զորախումբը), հարձակում սկսելով Վորոնցովկայի (այժմ՝ Տաշիր) ուղղությամբ, մարտական առաջադրանք ուներ Քարախաչի լեռնանցքով հասնել Բոլնիս-Խաչեն, Բորչալու եւ, միանալով Ղազախից Թիֆլիս շարժվող զորքերին, գրավելու Թիֆլիսը, ապա եւ Բաքուն:

Թուրքական երկրորդ զորախումբը հրաման ուներ հարձակվելու Ջաջուռ-Համամլու (Սպիտակ)-Ղարաքիլիսա (Վանաձոր)-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ (Գանձակ, Գյանջա) ուղղությամբ: Եթե ձախ թեւից հարձակվող թուրքական զորախումբը հասած լիներ Շուլավեր, ապա Ելիզավետպոլ արշավող թուրքական զորքերը պետք է Ղազախից օժանդակող ուժեր տրամադրեին դեպի Թիֆլիս, այնուհետեւ Բաքու շարժվող թուրքական զորքերին: Առաջին երկու ուղղությունները թուրքերի հիմնական նպատակն էին, քանի որ նրանք ուզում էին արագորեն վերահսկողությունը սահմանել Ղազախ-Աղստաֆա-Ելիզավետպոլ երկաթուղու վրա՝ դեպի Բաքու արշավելու համար:

Երրորդ զորախումբը (Կովկասյան 9-րդ հետեւակային դիվիզիա) հարձակման ուղղություն էր վերցրել Ալեքսանդրապոլից դեպի Բաշ-Ապարան՝ հրաման ունենալով հյուսիսից պատնեշել Երեւանը, իսկ հարկ եղած դեպքում նաեւ շարժվել Համամլու-Ղարաքիլիսա ուղղությամբ:

Չորրորդ զորախումբը (Կովկասյան 36-րդ հետեւակային դիվիզիա) պետք է հարձակվեր Ալեքսանդրապոլ-Սարդարապատ-Երեւան երկաթգծի (Անի-Սարդարապատ-էջմիածին-Երեւան) ուղղությամբ: Հարձակում էր նախապատրաստվել նաեւ Արդահան-Ախալցխա-Ախալքալաք ուղղությամբ:

Այսպիսով՝ թուրքական բազմագլուխ վիշապ-հիդրայի հարձակման գիծը ձգվում էր Ախալցխայից մինչեւ Երեւան, ու այդ գծի վրա գտնվող յուրաքանչյուր դիմադրող բնակավայր, հենակետ կամ ճակատամարտի օջախ անգնահատելի նշանակություն ունեցավ հայոց դիմադրական ոսկե շղթայի ամրությունն ու կենսունակությունը, մարտնչող ոգին անբեկանելի, անխորտակ դարձնելու գործում: Նրանք, թեկուզ եւ կարճ ժամանակով, կարողացան իրենց վրա բեւեռել թուրքական հիդրայի մի-մի գլուխ՝ այդպիսով մասնատելով ու ջլատելով թուրքական ամբողջական զորախմբերը, թույլ չտվեցին թուրքական զորախմբերին կենտրոնացված, հուժկու հարված հասցնել հայկական խոշոր դիմադրական կենտրոններին: Այդ փոքրամասշտաբ դիմադրական շրջաններն ապահովեցին հայոց դիմադրական շղթայի անքակտելիությունը եւ նպաստեցին ավելի խոշոր ճակատամարտերում հայերի տարած հաղթանակներին:

Արեւելյան Հայաստանում թուրքական զորքերի հետ առաջին ընդհարումները եւ դիմադրական մարտերը տեղի ունեցան Ջավախքում եւ Շիրակում: Ախալքալաքի քաղաքագլուխ Մկրտիչ Մարգարյանի գլխավորած ազգային խորհրդի աջակցությամբ եւ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկու հրամանով կազմակերպվեց գավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե եւ հրաձգային գունդ: 1918 թ. ապրիլի 10-ին Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ առանձին հարվածող զորամասը շարժվեց դեպի Շիրակի հյուսիս, հասավ Գյուրջիյոլ (Թորոս) գյուղը եւ դիրքեր գրավեց Աշոցքը Լոռուն միացնող ռազմավարական նշանակությամբ ճանապարհի սկզբնամասում՝ Քարախաչի լեռնանցքի մուտքի մոտ: Ապրիլի 14-ին զորամասը Ղազանչի գյուղի մոտ մարտի բռնվեց թուրքերի ու քրդերի հետ: Թշնամին չդիմացավ եւ նահանջեց դեպի Ախուրյանի վտակ Ղալիչայի աջ ափը: Կարսի մարզը զավթած թուրքական զորքերը ապրիլի 16-ին հասան Ախուրյանի ափը: Թուրքական մի զորաջոկատ էլ հասավ Աշոցքը Ջավախքին միացնող ճանապարհին: Չունենալով անհրաժեշտ պաշարներ եւ չստանալով Հայոց ազգային ու Ապահովության խորհուրդների աջակցությունը եւ ունենալով գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանը՝ Անդրանիկը Քարախաչի լեռնանցքով նահանջեց Վորոնցովկա: Թուրքական զորքերն անարգել շարժվեցին դեպի Աշոցք եւ Ջավախք: Ախալքալաքի գավառի հայկական ջոկատները դիմադրություն կազմակերպեցին: Հատկապես համառ մարտեր տեղի ունեցան Սաթխա գյուղի մատույցներում: Թուրքական կովկասյան 5-րդ դիվիզիայի զորամասերը, որոնց հրամայված էր Քարախաչի լեռնանցքով եւ Տաշիրի ու Բորչալուի վրայով Թիֆլիս արշավելու, հանդիպելով Անդրանիկի հզոր դիմադրությանը, փոխեցին ուղղությունը եւ որոշեցին Ջավախքի վրայով մտնել Թիֆլիս: Սակայն մայիսի 30-ին ու 31-ին նրանք հանդիպեցին շուրջ 500 սաթխացիների (թուրքերի արտահայտությամբ՝ *«Դայա տաշի»* (ժայռ)) համառ դիմադրությանը: Մոտ 3000 բնակիչ ունեցող Սաթխա գյուղի թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք երդվել էին կռվել մինչեւ վերջ: Երկու օրվա ընթացքում թուրքերն այնքան շատ կորուստներ կրեցին Սաթխայի մատույցներում, որ այլեւս ի վիճակի չէին արշավելու Թիֆլիս:

Հայկական ուժերն ապահովեցին գավառի բնակչության տեղափոխումը հարեւան շրջաններ: Ջավախք ներխուժած թուրքերին տեղի հայերից կազմավորված ջոկատները 1918 թ. մայիսի 16-ի լույս 17-ի գիշերը Կարծախի մոտ կարողացան կազմակերպել կարճատեւ դիմադրություն: Մայիսի 13-18-ը Բուղդաշենի (Գորելովկա) սարերում եւ Մեծ Խանչալիի շրջանում մղված մարտերում թուրքերը պարտվեցին: Հաղթանակի գործում վճռական նշանակություն ունեցավ Քարախաչի լեռնանցքով Անդրանիկի կատարած զորաշարժը: Դիմադրական մարտերի շնորհիվ հնարավոր եղավ Ախալքալաքի հյուսիսային գյուղերի 40000 բնակիչների տարհանել դեպի Բակուրիան, իսկ հարավային գյուղերից 30000-35000 մարդ տարհանվեց Ծալկա:

1918 թ. հունվարից թուրքերն ուժեղացրել էին Ախալցխայի շրջափակումը՝ փակելով դեպի Բորժոմ, իսկ Ասպինձայի մոտ՝ դեպի Ախալքալաք տանող ճանապարհները: Ախալցխայի հայերն ու վրացիները դիմեցին ինքնապաշտպանության: Ընդհանուր հրամանատար գեներալ Գ. Արջեւանիձեն Ախալցխայի ազգային խորհրդի նախագահ Զորի Զորյանի (հայրը Գողթն գավառի Ցղնա գյուղից էր, մայրը՝ Թիֆլիսից) եւ հայկական գումարտակի հրամանատար գնդապետ Չաուշովի աջակցությամբ իրականացրեց մի քանի դիմադրական մարտեր: Ծղալթբիլա գյուղի քաջորդիները ապրիլի 27-ին գլխովին ջախջախեցին իրենցից բազմապատիկ անգամ շատ Ջախսուի ենթաշրջանի թուրքական գյուղերի հրոսակներին: Հիշարժան է նաեւ Դիպակ սարի ճակատամարտը, իսկ մայիսի 3-4-ը՝ հայկական Ծուղրութ եւ Ծիրա գյուղերի մոտ մղված մարտերը: Դիմադրական մարտերը շարունակվեցին մինչեւ հունիսի 6-ը, եւ թուրքերին այդպես էլ չհաջողվեց գրավել Ախալցխան:

Հայերը հուժկու հակահարված հասցրին թուրքերին նաեւ Տամալայում (Դամալա), որը գտնվում է Ախալքալաքի եւ Ախալցխայի միջեւ: Անտառամիջյան ուղիներով կապված էր Ախալքալաքի հետ, որտեղից էլ ռազմական օգնություն էր ստանում: Տամալան ռազմավարական կարեւոր հանգույց էր: Տեղի բնակչության դիմադրությունը թշնամու համար անսպասելի էր: Տամալայի ինքնապաշտպանության ղեկավարը Մարտիրոս (Մատո) Սահակյանն էր: 1918 թ. հունվար-ապրիլ ամիսներին արյունահեղ կռիվներ մղվեցին գյուղի մատույցներում: Այս հերոսամարտը զգալիորեն թուլացրեց թուրքերի հարձակման թափը եւ նպաստեց Ախալցխայի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

1918 թ. Մայիսյան հերոսամարտերի շղթայում ուրույն տեղ ունի Շիրակի գոյամարտը:

1918 թ. մայիսի 16-27-ը հաղթական մարտեր են մղվել Սոգյութլու (Սառնաղբյուր) ճակատում: Սոգյութլու գյուղում հավաքվել էին տասնյակ հազարավոր անպաշտպան փախստականներ: Պետք էր շտապ նրանց տեղափոխել մինչեւ թուրքերի հայտնվելը: Գյուղի *«Հովեյ»* օդայում հավաքվում են հեղինակավոր մարդիկ, որոնց թվում էին Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից սպաներ Նոյի Սարգիսը, Աթաշի Եղիշը, Խչոյի Սերոբը, շարքայիններ Մնեի Սմբատը, Հարութի Մարալովը, Քոչոյի Թորոսը եւ ուրիշներ: Հարցը համակողմանի եւ մանրամասն քննարկելուց հետո որոշվում է նախ ապահովել բնակիչների ու փախստականների տարհանումը դեպի էջմիածին եւ Երեւան: Իսկ ովքեր ունակ էին զենք բռնելու, ընդգրկվեցին գյուղի պաշտպանության գործում: Կազմակերպվեց դիմադրություն, պաշտպանվողներն ունեին միայն մեկ գնդացիր եւ զինված էին *«Մոսին»* հրացաններով: Չեւավորված դիմադրական ճակատին միացան նաեւ Շիրակի եւ Արագածոտնի գյուղերում ապաստանած հազարավոր արեւմտահայ գաղթականներ: Գաղթական կամավորներով համալրեցին կռվողների շարքերը: Այսպես՝ դեռ մայիսի 5-ին Տարոնի 500 կամավորները Սասունցի Մանուկի եւ Մուշեղի գլխավորությամբ գրավեցին Ներքին Թալինի բերդը: Նրանք կարողացան Արագածի լեռնազանգվածը մաքրել քրդերից ու թաքարներից, ինչը մեծ դեր խաղաց Սարդարապատի հաղթանակի գործում: Միայն դիմադրության 7-րդ օրը՝ մայիսի 22-ին, երբ էջմիածնից եկած կապավորը տեղեկացնում է, որ համագյուղացիները բարեհաջող տեղ են հասել, իրենց պարտքը խիզախությամբ կատարած պաշտպանները թողնում են գյուղը եւ հեռանում էջմիածին: Սոգյութլուի դիմադրությունը պատվի ու ազատության համար մղված պայքարի փայլուն օրինակ է:

Թուրքերին հերոսաբար դիմադրում է նաեւ Մոլլա Գյոքչա (Մարալիկ) գյուղը՝ Ալեքսանդրապոլի գավառի չորրորդ գավառամասի կենտրոնը: Այստեղ կռիվները ղեկավարում էին Առաքել Սիմոնյանը եւ Աղանիկ Աղբալյանը: Թուրքերը, չկարողանալով ընկճել 50-60 հոգանոց խմբի հերոսական դիմադրությունը, հրաժարվում են հետագա գործողություններից:

շարունակությունը՝ էջ 9

Հայ ժողովրդի միասնական ոգու հրաշակերտ հաղթանակը

սկիզբը՝ էջ 8

Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքական չորրորդ զորախումբը Յաղուբ Շեւքի փաշայի գլխավորությամբ մայիսի 21-ին հարձակվեց Սարդարապատի ուղղությամբ՝ Երեւան ներխուժելու նպատակով: Թուրքական այդ զորախմբի կազմում էին 36-րդ հետեւակային դիվիզիան, հարվածային եւ սակրավորների մեկական գումարտակներ, հեծյալ գունդ, 1500 քուրդ հեծյալներ, հրետանային մարտկոց (40 հրանոթ):

Մայիսի 22–29-ը Արագածի լանջերից մինչեւ Արաքս, Սարդարապատից մինչեւ Սեւան գիշերցերեկ անդադար, տագնապալի ու սարսռազդու ղողանջում էին բոլոր եկեղեցիների զանգերը: Ժողովուրդը զինվում եւ օգնության էր շտապում կանոնավոր զորամասերին: Սարդարապատի պաշտպանության կազմակերպումը Թ. Նազարբեկյանը հանձնարարել էր Երեւանյան զորախմբի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանին, որի զորախմբի կազմում էին 2-րդ հրածգային դիվիզիան (առանց 7-րդ եւ 8-րդ գնդերի), 3-րդ հետեւակային բրիգադը (Վանի 1-ին եւ 2-րդ գնդերը, Մակուի հետեւակային գումարտակը) եւ 2-րդ հեծյալ բրիգադի 1-ին գունդը: Պաշտպանական միջոցներ էին ձեռնարկվել նաեւ Կողբի եւ Իգդիրի ուղղությամբ: Այս ուղղությամբ դեպի Երեւան շարժվող թուրքական 5-րդ եւ 12-րդ դիվիզիաների առաջխաղացումը կանգնեցնելու համար Մ. Սիլիկյանի կարգադրությամբ պայթեցվեցին Ղարաղալայի եւ Մարգարայի կամուրջները, Արաքսի ձախ ափին խրամատներ կառուցվեցին եւ թույլ չտրվեց թուրքերին անցնել գետը: Գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հետեւակային 3-րդ բրիգադը դիրքավորվել էր Նախիջեւան-Շարուր ուղղությամբ: Սարդարապատի զորախումբը, գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ, դիրքեր էր գրավել Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական զորախմբին դիմակայելու համար, իսկ 6-րդ հրածգային, 2-րդ հեծյալ եւ պարտիզանական հեծյալ գնդերին հանձնարարվել էր սահմանապահ գումարտակի աջակցությամբ փակել Բաշ-Ապարանից Երեւան շարժվող թուրքական 9-րդ դիվիզիայի ճանապարհը: Թիկունքի եւ Երեւանի պաշտպանությունը ղեկավարում էր Արամ Մանուկյանը:

Թուրքական բանակի առաջապահ ուժերը մայիսի 21-ին գրավել էին Սարդարապատ կայարանն ու նույնանուն գյուղը (այժմ՝ Հոկտեմբեր) եւ Գեչռլուն (այժմ՝ Մրգաշատ): Մայիսի 22-ին 5-րդ հրածգային (հրամանատար՝ գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյան), պարտիզանական հետեւակային (հրամանատար՝ Վասիլի Պերեկրյոստով), Իգդիրի հետեւակային եւ Զեյթունի հեծյալ (հրամանատար՝ Սարգիս Սալիբեկով) գնդերը Քյորփալուից (այժմ՝ Արշալույս) եւ Ղուրդուղուլիից (այժմ՝ Արմավիր գյուղ) անցնում են հարձակման, Ղամշլու (այժմ՝ Եղեգնուտ) գյուղի մոտ կոտրում թուրքերի դիմադրությունը, վերագրավում Սարդարապատ գյուղն ու կայարանը եւ հարկադրում թշնամուն նահանջել շուրջ 15–20 կմ: Սակայն երբ հայկական ուժերը դադարեցնում են հետապնդումը, թուրքերը վերադասավորում են ուժերը եւ ամրանում Արաքս կայարանի հյուսիսարեւմտյան Չիմնի եւ Թուլքի բարձունքներում: Թուրքական հրամանատարությունը որոշում է համալրել Յաղուբ Շեւքի փաշայի զորքը (մայիսի 22-26-ը մղված մարտերի ընթացքում զոհվել էին մոտ 3500 թուրք զինվորական), սակայն հայերը հետ շպրտեցին Շեւքի փաշային օգնության եկող Մյուրսել փաշայի 5-րդ դիվիզիան: Հայկական հրամանատարությունը մշակեց թուրքերին վճռական հարված հասցնելու եւ ջախջախելու ծրագիր: Ստեղծվեց հարվածային զորախումբ՝ գնդապետ Կ.Հասան-Փաշայանի (Ղասաբբաշյան) հրամանատարությամբ: Այդ զորախմբի կազմում էին Երզնկայի հետեւակային գունդը, Մակուի առանձին գումարտակը, երկու էսկադրոն, Խնուսի գնդի մեկ վաշտ եւ 4 հրանոթ), որոնք, Պանդուխտի (Միքայել Սերյան) գլխավորած մշեցիների ջոկատի հետ շրջանցելով թուրքերին, մայիսի 27-ին թիկունքից հարվածեցին ոսոխին, միաժամանակ հայկական հիմնական ուժերը հարվածեցին ճակատից: Ծանր կորուստներ կրելով՝ թուրքական զորաբանակի մնացորդները խուճապահար փախան Ալեքսանդրապոլ: Ճակատամարտն ավարտվեց թուրքական գերակշիռ ուժերի դեմ տարած լիակատար հաղթանակով: Սարդարապատի ճակատամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից է:

Թուրքական երրորդ զորախումբը (Կովկասյան 9-րդ հետեւակային դիվիզիա) հարձակման ուղղություն էր վերցրել Ալեքսանդրապոլից դեպի Բաշ-Ապարան: Թուրքական հրամանատարությունը որոշել էր 9-րդ դիվիզիան ուղարկել Բաշ-Ապարան՝ փորձելով Երեւան արշավել հյուսիսից եւ դուրս գալ Սարդարապատի շրջանում հակահարձակման անցած հայկական զորամասերի թիկունքը՝ նրանց կտրելով Երեւանից: Թուրքական այդ ծրագիրը խափանելու նպատակով հայոց զորքերի հրամանատարությունը որոշում է Սարդարապատի ճակատից Դրոյի (Դրաստամատ Կանայան) գլխավորությամբ շտապ ուժեր (6000 զինվոր) տեղափոխել Բաշ-Ապարան:

Մայիսի 24-ին Դրոյի զորաջոկատը մտել է Ալի Քուչակ (այժմ՝ Քուչակ)՝ դեպի Բաշ-Ապարան արշավող թուրքերին դիմակայելու համար: Մայիսի 29-ին Բաշ-Ապարանում ջախջախվել է հակառակորդի 2 գունդ եւ ոչնչացվել ծանր հրետանին: Թշնամին, մարտադաշտում թողնելով մոտ 200 սպանված, 2 գնդացիր, 100-ից ավելի հրացան եւ զինամթերք, հետ է մղվել Բաշ-Ապարանից արեւմուտք:

Հայկական կանոնավոր զորամասերին մեծ աջակցություն են ցույց տվել ինչպես հայ, այնպես էլ Զահանգիր աղայի գլխավորությամբ եզդի աշխարհազորայինները (1500 հեծյալ): Մարտերի ընթացքում թուրքական հրոսակները գլխովին ջախջախվել են եւ հետ շպրտվել Բաշ-Ապարանից արեւմուտք:

Թուրքական երկրորդ զորախումբը, որը հրաման ուներ հարձակվելու Ջաջուռ-Համամլու (Սպիտակ)-Ղարաքիլիսա (Վանաձոր)-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ (Գանձակ, Գյանջա) ուղղությամբ, մայիսի 20-ին գրավեցին Ջաջուռը, Աղբուլաղը (այժմ՝ Լուսաղբյուր), Ղալթաղչին (այժմ՝ Հարթագյուղ), մայիսի 21-ին՝ Վորոնցովկան (Տաշիր): Մայիսի 21-22-ին Ջալալօղլիի (այժմ՝ Ստեփանավան) մոտ մղված երկօրյա մարտերից հետո Անդրանիկի ջոկատը կենտրոնացավ Դսեղ գյուղում, ապա շարժվեց դեպի Դիլիջան: Գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանով 1-ին դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյան) եւ երկու լեռնային մարտկոցներ քաշվեցին դեպի Շահալի (այժմ՝ Վահագնի), մնացածները կենտրոնացան Դիլիջանի մոտ: Մայիսի 24-ին թուրքերը գրավեցին Համամլուն (այժմ՝ Սպիտակ): Ղարաքիլիսայի մոտ կենտրոնացած հայկական զորքը (հրամանատար՝ Թ. Նազարբեկյան) ուներ մոտ 6000 զինվոր, 70 հրանոթ եւ մոտ 20 գնդացիր, թուրքական զորքը (հրամանատար՝ Ջավադ բեյ)՝ մոտ 10000 ասկյար, 70 հրանոթ եւ 40 գնդացիր: Մարտերին հերոսաբար մասնակցել են նաեւ Ղարաքիլիսայի շրջակա գյուղերի բնակիչները:

Հայկական ուժերը թուրքերին հիմնական հարվածներ հասցրին Ղշլաղ (այժմ՝ Դարպաս) գյուղի մոտ, Բզովդալի (այժմ՝ Բազում) մատույցներում եւ Մայմեխ լեռան լանջերին ու թուրքական գերակշիռ ուժերին հարկադրեցին նահանջել դեպի Համամլու: Մարտերի ընթացքում հայերը տվեցին մեծ կորուստներ (շուրջ 2500 մարդ սպանված, վիրավոր եւ գերի): Մեծ կորուստներ տվեցին նաեւ թուրքերը, սակայն, համալրում ստանալով անցան հակահարձակման, եւ հայկական ուժերը հարկադրված նահանջեցին դեպի Դիլիջան: Ղարաքիլիսայում եւ շրջակա գյուղերում թուրք ջարդարարները կոտորել են հայ բնակչությանը (շուրջ 5000 մարդ), ավերել բնակավայրերը: Ղարաքիլիսայի ճակատամարտից հետո թուրքական զորքերը արշավեցին Ղազախ, Գանձակ եւ Բաքու: Ցավոք, հայկական ուժերը, չունենալով բավարար քանակությամբ զինվորական ուժեր, աշխարհազորայիններ, զենք ու զինամթերք, չկարողացան կանգնեցնել թուրքական զորախմբի առաջխաղացումը դեպի Ղազախ: Սակայն Ղարաքիլիսայի ճակատամարտը չի կարելի թուրքերի հաղթանակ համարել, քանզի այդ *«հաղթանակած»* զորախումբը Բաշ-Ապարանում ու Սարդարապատում ջախջախված ազգակիցներին օգնելու փոխարեն շարժվեց դեպի Ղազախ, Գանձակ ու Բաքու: Այսինքն՝ Պյուռոսյան հաղթանակ տարած այս զորախումբը նախընտրեց շուտափույթ Հայաստանը լքելու ճանապարհը: Ղարաքիլիսայի ճակատամարտում հայերն ապացուցեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները:

Այսպիսով՝ հայ ժողովրդի մղած Հայրենական մեծ պատերազմը՝ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը դարձան հայ ժողովրդի ազատագրական մաքառումների թագն ու պսակը: Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը բազմիցս հայրենական պատերազմներ ու ազգային-ազատագրական մարտեր է մղել այլազգի զավթիչների դեմ, սակայն իրենց բախտորոշ նշանակությամբ առանձնանում են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը: Մայիսյան հերոսամարտերում՝ հայ ժողովրդի Հայրենական մեծ պատերազմում, մեր հաղթանակները նվաճվեցին հայ փորձառու հրամանատարների հմուտ ղեկավարությամբ գործող հայկական կանոնավոր զորամասերի ու աշխարհազորայինների, ժողովրդական լայն զանգվածների հերոսական ու կենաց պայքարի գնով: Մայիսյան հերոսամարտերում լավագույնս դրսեւորվեցին հայկական ռազմական արվեստի հաղթանակակիր ավանդույթները: Հայրենական մեծ պատերազմին մասնակցեցին հայ ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչները՝ գյուղացիներ, մտավորականներ, հոգեւորականներ, արհեստավորներ, հայ սպաներ՝ անկախ քաղաքական հայացքներից ու կուսակցական պատկանելիությունից եւ բոլոր տեսակի տարաձայնությունները մի կողմ դրած: Մասնակցում էին թե՛ հասուն տարիքի կռվողներ, թե՛ անփորձ աշակերտներ ու ուսանողներ, ծերեր ու պատանիներ: Հաղթանակների մեջ իրենց կարեւոր ներդրումն ունեցան հայուհիները, որոնք սննդամթերք, ջուր ու ռազմամթերք էին մատակարարում եւ ծառայում որպես գթության քույրեր:

1918 թ. հայ ժողովրդի մղած Հայրենական մեծ պատերազմում, անշուշտ, առանցքային էր Սարդարապատում տարած պատմական հաղթանակը, քանզի թուրքական զորքերն այդպես էլ չկարողացան մտնել Արարատյան աշխարհի սիրտը՝ Երեւան ու Ս. Էջմիածին: Հայ ժողովուրդը միահամուռ ոտքի ելավ, ջախջախեց եղեռնաբեր ոսոխին ու թույլ չտվեց մտնելու եւ պղծելու Երեւանն ու Ս. Էջմիածինը, որոնք զերծ մնացին Ալեքսանդրապոլին ու Ղարաքիլիսային բաժին ընկած վայրագությունները տեսնելուց եւ դառնության բաժակները քամելուց: Սակայն դա ամենեւին էլ չի նշանակում, թե մյուս հերոսամարտերը երկրորդական էին: Ո՛չ, իհարկե: Հերոսամարտերից յուրաքանչյուրը ամբողջացնում էր մեծ խճանկարը կամ մաքառումների ոսկե շղթայի մեկ օղակը: Առանց խճանկարի այդ հատվածի, երանգի կամ շղթայի օղակի ավարտուն, կատարյալ չէր լինի ամբողջ խճանկարը կամ շղթան: Ուստի այս հաղթանակները միշտ պետք է դիտարկել անքակտելի միասնության մեջ՝ իբրեւ մեկ ամբողջական, կուռ համակարգ:

1918 թ. Մայիսյան հաղթանակները հայ ժողովրդի ազատագրական պայքարի գլուխգործոցն են: Հայոց միասնական ոգու հաղթանակների շնորհիվ՝ Արեւելյան Հայաստանի զգալի մասը փրկվեց թուրքական զավթումից, հայությունն ազատվեց կրկին ցեղասպանության ենթարկվելու եւ ֆիզիկապես ոչնչանալու դաժան ճակատագրից, հնարավորություն ստեղծվեց հայկական անկախ պետության վերականգնման համար, եւ 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

Միով բանիվ՝ եթե, ըստ Դերենիկ Դեմիրճյանի, *«Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի կենաց հարատեւության արտոնաթուղթը կնքեց»,* ապա հայ ժողովրդի մղած 1918 թ. Հայրենական մեծ պատերազմը՝ Մայիսյան հերոսամարտերը, հայոց ազատ, անկախ, ինքնիշխան պետության կերտման հաղթաթուղթն ու իրավունքը դարձավ եւ այդ պետության հարատեւության արտոնաթուղթը կնքեց:

Արման ՄԱԼՈՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը

Սարդարապատի հուշահամալիրը կառուցվել է մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը թեպետ խաղաղ շրջան էր ապրում եւ ուներ իր վարչական միավորը, այնուհանդերձ, ազգայինը ըստ արժանվույն գնահատելու, իմաստավորելու եւ մեծարելու հնարավորություն առանձնապես չուներ: Ահա այս պատմաժամանակային տիրույթում առավել եւս կարեւորվում է նման համակառույցի ստեղծումը, որը մի հետաքրքիր եւ ուսանելի պատմություն է:

Հուշահամալիրի ստեղծման վերաբերյալ հարուստ նյութ կա ճանաչված արձակագիր-հրապարակախոս Հրաչյա Մաթեւոսյանի *«Սարդարապատ. մեր գոյության զորեղ տունն այս սրբազան...»* խոհագրության մեջ, որը շուրջ 30 տարի առաջ տպագրվել է *«Հայրենիքի ձայն»* շաբաթաթերթում, ապա՝ 2006 թ., նաեւ Աշոտ Ղուկասյանի *«Վլադիմիր Դարբինյանի կյանքն ու գործը»* գրքում:

Հուշարձանի կանգնեցման գործում մեծ է եղել Հայաստանի այն ժամանակվա ղեկավար Անտոն Քոչինյանի եւ Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Դարբինյանի ավանդը: Ինչպես իրավամբ նկատում է Հրաչյա Մաթեւոսյանը, *«...Եթե Անտոն Քոչինյանը չլիներ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը, եթե Վլադիմիր Դարբինյանը չլիներ ՀԿԿ Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղարը, եւ եթե նա չլիներ հրաշալի պատմաբան, հիշողության հարստության տեր, չլիներ հայրենասեր, չլիներ նախաձեռնություններին շունչ ու ոգի հաղորդող, հավատացե՛ք, գուցե ոչ ճիշտ խոսք եմ ասում, էսօր չէինք ունենա այսօրվա թանգարանը... էսօր փառք ու պատիվ ե՛ւ Անտոն Քոչինյանին, ե՛ւ Վլադիմիր Դարբինյանին, ե՛ւ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանին, բոլորին, ովքեր դարձան Սարդարապատի գոյամարտի մասնակիցների արժանավոր ժառանգները: Հաղթանակ՝ երեկ, հաղթանակ նաեւ մեր օրերում...»:*

Հուշահամալիրը կառուցելու գաղափարի մասին Վլադիմիր Դարբինյանը պատմում է. *«Ձահել էի, Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի առաջին քարտուղարը: Ինձ բոլորը ճանաչում էին որպես քիչ թե շատ պատմություն իմացող: Մեղքս ի՞նչ թաքցնեմ. Սարդարապատի ճակատամարտի մասին մեր իմացածը չիմացածից շատ չէր: Մի օր իմ բարեկամ պրոֆեսոր Հրանտ Թամրազյանի տանը զրուցում էինք: Այնտեղ էր նաեւ Հրաչյա Քոչարը: Պեծ ու կրակ որ ասում են, ինձ թվում է, նրա մասին են ասում: Թափառող միտք ուներ: Մենք ինչի՞ց էինք խոսում, հանկարծ Քոչարը իր երգով լռեցրեց մեզ. Սուրմալուին նվիրված երգը երգեց: Հիշո՞ւմ եք. «Օձն է նստել բախտիդ վրա, Սուրմալու...»: Երգից հետո բացխփեց աչքերը, տրորեց, ապա սկսեց խոսել Սարդարապատի, թուրքերի դեմ մղած հայոց ճակատամարտի, հաղթանակի, մեր վերականգնված պետականության, եռագույնի մասին: Ասաց՝ Սարդարապատը սպասում է իր Եղիշեին: Մինչ հիմա ամաչում եմ, որ ոչինչ չգիտեի Սարդարապատի՝ եռակի թանկ մեր Ավարայրի մասին: Ժամանակները սիրում են երբեմն դառնորեն քարոզել ճշմարտությունները: Սարդարապատը հենց մեր ճշմարտությունն է, ոգին: Քոչարյան ինքնաբուխ, հայկաշունչ դասից հետո ես երկար ժամանակ մտածում էի Սարդարապատի ճակատամարտի մասին: Հրանտ Թամրազյանի համար Սարդարապատը նույնպես փակ գոտի էր: Ի՞նչ անենք: Ուրիշներն իրենց չեղածին են տեր կանգնում, մենք մեր եղածը չենք տալիս հենց մեզ, մեր զավակներին: Քոչարյան դասից հետո սկսեցի պարզապես ապրել Սարդարապատով: Նշանակվեցի (էն ժանամակ նշանակում էին, չէին ընտրում) Հոկտեմբերյանի կուսշրջկոմի առաջին քարտուղար: Ամիսներ անց Քոչարը տեսավ, շնորհավորեց, հետո ասաց՝ լավ մոտեցել ես Սարդարապատի ճակատամարտին, բայց տեսնենք մոտեցե՞լ ես, թե՞ մոտենալով՝ հեռանալու ես: Հասկացա բառախաղը: Մոտենում էր ճակատամարտի 50-ամյակը: Ճակատամարտի մասնակից պապի պատմությունը թոռը չէր լսել, որովհետեւ քաղաքացիական պատերազմի թեմաներով անվերջ ֆիլմեր էին ցույց տալիս, միշտ «մերոնք հաղթում էին», կամ շա՜տ հետաքրքիր բաներ: Այն էլ անպայման հեռուներում եղած. մեր աչքի առջեւ կատարվածը մեզ չէր հասնում»:*

Կառույցի ճարտարապետը մեծն Թամանյանի արժանավոր աշակերտ, ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն է: Նրան դիմելու խորհուրդը Վլադիմիր Դարբինյանին տվել է Ռազմիկ Ալավերդյանը՝ վաղամեռիկ նվիրյալ ճարատարապետ, ով մեր գյուղերին բազմաթիվ մշակույթի տների նախագծեր է նվիրել՝ ձրի, վարձը՝ մածուն ու լավաշ, եւ ում Դարբինյանը երախտագիտությամբ ու ջերմությամբ է հիշում: Ալավերդյանը շեշտել է, որ Իսրայելյանի նման ոչ ոք մեր ազգային ոգին չի հասկանում, ասել է նաեւ, որ ճարտարապետը լավ գիտե, թե ինչ է կատարվել Սարդարապատում, եւ Սարդարապատը հայ ժողովրդի կյանքում ինչ լիցքեր ունի: *«Իսրայելյանը հենց առաջին սիրտ ու բերան, ոգի ու կանչ ճարտարապետ էր, նկարիչ էր, գրող էր, մեծ հայ էր,-* ասում է Վլադիմիր Դարբինյանը: *- Հազար ափսոս ու ողորմի ասենք: Անմոռաց էր նրա խոսքի, բառի մաքրությունը: Բառը, խոսքը՝ զտարյուն, հալած ոսկի: Ամեն ինչ հայեցի: Զարմանալի մաքուր, բարձր զգացմունքների տեր արվեստագետ էր: Նաեւ վիճել ենք: Քառասուն մետրանոց սո՞ւր մեկնել, թե՞ զանգակատուն կանգնեցնել քառասուն մետրանոց: Շուտ մտերմացանք: Ասեմ, որ սկզբում հրաժարվում էր. ծանոթ էր շրջկոմների չոր ոճին»:* Ճարտարապետը վախենում էր, որ շրջկոմի երիտասարդ քարտուղարը կփորձի կաղապարել իր երեւակայության թռիչքը: Բայց քարտուղարն ասել էր. *«Ձեզ ստեղծագործական ազատություն, Վարպե՛տ, բա՛ց թողեք ձեր ձիերի սանձերը. ես էլ պակաս հեծվոր չեմ, գիտեմ ներշնչանքի վեհությունը ու գիտեմ նաեւ ձիուս արժեքը»:*

Եվ սկսվեց հուշահամալիրի կառուցումը: Ժողովուրդը գիշեր-ցերեկ աշխատում էր՝ քանդակագործներ Արա Հարությունյան, Սամվել Մանասյան, Արշամ Շահինյան, քարտաշ վարպետներ...

Գիշեր-ցերեկ կառուցավայրում էր նաեւ Վլադիմիր Դարբինյանը: Հուշահամալիրի կերտման ընթացքում նա վկան եղավ ժողովրդական հզոր, միասնական ոգու դրսեւորմանը: Շրջանի բնակչությունը՝ դպրոցականից մինչեւ թոշակառու, մասնակցում էր այդ սուրբ գործին: Ազգային ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը ազգի ոգին էր դարձել. կանչում էր բոլորին, ասում՝ հացն ու գինին, տեր կենդանին: Գործի ծանրությունն ընկած էր հոկտեմբերյանցիների վրա: Անշուշտ, Կառավարությունն օգնում էր: Անտոն Քոչինյանն ամեն խնդրով նեցուկ էր կանգնում այս նվիրական գործին, ոգեւորում գործի գլուխ կանգնած մարդկանց:

Այստեղ աշխատում էին վարպետներ Ջանֆիդայից, Նոր Արմավիրից, Նոր Ամասիայից՝ իրենց հաց ու ջրով. գալիս էին բոլոր գյուղերից: Մի քարգործ վարպետ կար՝ Գառնիկ Ամիրջանյան. բազմաթիվ մտահղացումների էր շունչ տվել, նաեւ ինքնուրույն գործերի հեղինակ էր: Իսրայելյանը շատ էր հարգում այս մարդուն: Նրա երաշխավորությամբ քարը ծաղկեցրած, դրան հույզ, իմաստ ու բովանդակություն տված վարպետն ընդունվում է ճարտարապետների միություն:

«Ամենաուժեղ քարգործը մնում է Սամսոն Խշոյանը,- ասում է Դարբինյանը: *- Նայե՛ք արձվաքանդակները: Ուժեղ այր էր Սամսոնը: Մեր հինգ մատը նրա մի մատի հաստությունն էլ չուներ: Տորք Անգեղ էր: Սասունցի էր: Ապրում էր Նոր Արմավիրում: Ութ զավակ ուներ՝ չորս տղա, չորս աղջիկ: Իր ախպեր-տղերքի հետ առավոտից իրիկուն իր քարգործին էր, արձվաբանին: Մի օր էլ եկա տեսա, որ արձվի գլխաքանդակը, ահռելի ծանրություն, գրկած բարձրացնում է: Մոտեցա, բարեւ տվի: Բարեւիս ժպիտով պատասխանեց: Ասացի՝ վարպե՛տ, ասել եմ արդեն, քեզ կրկնակի աշխատավարձ կտան: Նեղացավ այնպես, որ իր հետ ձեռքի արձվագլուխն էլ մթնեց: Ոնց որ արձիվը թեւը փռեց ու ստվերեց նրա դեմքը: Նայեց լուռ ու՝ ընկեր Դարբինյան, էս ազնիվ գործի համար, եթե ինձ փող պիտի տան, ապա հենց հիմա արձվագլխի հետ ես ներքեւ կնետվեմ: Իսկ մենք սավառնելու համար ենք ծնվել: Ազգիս համար եմ գործ անում, իմ պապերի եւ եկող սերունդների... Ապա շարունակեց գործը: Ամեն անգամ, երբ դիտում եմ այս արձվաքանդակները, ինձ այնպես է թվում, թե վարպետ Սամսոնի հոգին եկել-ծվարել է այստեղ: Նորապատի վարպետներին չեմ մոռանում: Չեմ մոռանում ոչ մեկին՝ նրան, որ մի բաժակ թանջուր է տվել քարգործ վարպետին, նրան, որի լեզուն բերանում չորացել, բայց ձայն չի հանել, իր գործն է շարունակել: Անշահախնդիր գիշեր-ցերեկ աշխատում էին»: «Սարդարապատը կառուցելու ժամանակ,-* մի այլ առիթով ասել է Վլադիմիր Դարբինյանը,*- ես վարպետներից, պարզ գեղջուկներից երգեր էի լսում, որ անծանոթ էին: Մեր ժողովրդին պահած երգեր էին, օրորոցի մոտ, մարտադաշտում ծնված երգեր: Այդ երգերը խրոխտ թնդացել են, մեզ հետ մարտնչել, նաեւ վիրավորվել, մարդկանց նման մեղադրվել ու մոռացություն մատնվել: Հուշահամալիրը կառուցելու ժամանակ կամաց-կամաց արթնանում էին այդ երգերը, որ հիմա ամեն տան ու ամեն սրտում էլ հնչում են: Ազգը միշտ պիտի իրար գլխի հավաքվի, բայց ոչ միայն տեղը նեղ ժամանակ, այլ միշտ, որպեսզի...տեղը բոլորովին չնեղվի... Երգը ազգ է պահում: Ազգը պիտի իր երգը պահի»:*

Խոսելով վարպետների աշխատանքի մասին՝ Ռաֆայել Իսրայելյանն ասում էր. *«Զվարթնոցից հետո սա երկրորդ դեպքն է, երբ վարպետներն այսքան նրբին գործ են անում: Քարը քարին որ դրվում է, մազը արանքով չպետք է անցնի: Դա է իսկական հայկական վարպետությունը, ճարտարապետությունը»:*

Շատերն այն կարծիքին էին, որ պետք չէ այս վայրը կանաչապատել, այգիներ հիմնել, շրջակայքը պետք է թողնել այնպես, ինչպես եղել է, որպեսզի ժամանակի դաժանությունն ավելի ընդգծվի, իմացվի, թե ինչ վայրում է եղել ճակատամարտը: Վլադիմիր Դարբինյանը կարծում էր, որ այստեղ պետք է բազմաթիվ միջոցառումներ անցկացվեն, որ այստեղ հանգստի լավ գոտի պետք է ստեղծվի. թող երեւա, որ մեր նախնիների թափած արյունն արգասաբեր է եղել, պտուղ է տվել: *«Հիմա պատկերացրե՛ք,-* ասում էր նա,*- որ չկան այս պտղատու ծառերը, այս վարդաստանը, այս ծաղկանոցը: Հետո՞ ... Սրանք խորհրդանշում են հենց կյանքը: Այստեղ ե՛ւ պիտի ռեստորան լիներ, ե՛ւ հացատուն, հայոց օջախ, պիտի լիներ թանգարան, հենց սիրահարները, երիտասարդները պիտի այցելեն այստեղ, պիտի լուռ այստեղ երդում տան՝ հավատարիմ մնալ իրար, մայր հողին, հայոց հին ու ազնիվ ազգին: Մենք ասում ենք՝ օգնել մարդուն: Սա մի այնպիսի տեղ է դարձել, այնպիսի վեհ խորհուրդ է կրում իր մեջ, որ օգնում է մեր ժողովրդին ավելի լիարժեք ապրելու: Մեր պետականությունը վերականգնվել է այստեղ. մեծ սրբատեղի, ուխտատեղի պիտի դարձնենք այս վայրը»:*

Վլադիմիր Դարբինյանին հաճախ են հարցրել, թե նախաձեռնելով, կառուցելով, ճարտարապետ Իսրայելյանի մտահղացումներն իրականացնելով՝ ինքը տեսնո՞ւմ էր, որ դա հետո այդպիսի մեծ ճանաչման է հասնելու: Նվիրյալ հայորդին անկեղծորեն պատասխանում էր. *«Ես հասկանում էի, որ ե՛ւ ճակատամարտը, ե՛ւ այստեղ մեր ժողովրդի տարած հաղթանակին արժանի կառուցվող հուշարձանը մեծ նշանակություն ունեն: Բայց որ այսպես պիտի խոր ակոսի, մեր ժողովրդի կյանքում այսպիսի մեծ հետք պիտ թողնի, ես չեմ ուզում ետին թվով մարգարե երեւալ: Մարդու կյանքում կան աստեղային ժամեր: Եթե տրամադրվում ես մի գործ անել, ոչինչ այլեւս քեզ չի կարող նրանից վանել: Ակնթարթը դառնում է հավերժություն: Ես ապրել եմ այդ ակնթարթը: Արագությամբ, թափով առաջ էինք գնում: Հիշեմ Մարտիրոս Սարյանին: Ասաց՝ որոշ տեղեր, օրինակ, քանդակների հարցում, շտապել եք, արձիվների գլուխները փոքր են, բայց հիացած էր եւ բացականչեց. «Ապրե՛ք, երկար ապրեք, ես Ռաֆայել Իսրայելյանի ճակատը պիտի համբուրեմ, օրհնեմ, շատ մեծ գործ եք արել»»:*

Հեշտ չէր, սակայն, խորհրդային տարիներին այսպիսի հուշարձան կառուցելը, քանզի ոմանք անանուն եւ անուններով իրենց գրավոր բողոքները, հեռագրերն էին հասցնում Երեւան ու Մոսկվա՝ հիշեցնելով, որ պետք չէ կառուցել Սարդարապատի հուշահամալիրը, որովհետեւ ճակատամարտին մասնակցել են դաշնակցականներ: Նրանք մեղադրում էին նաեւ Դարբինյանին. ըստ նրանց՝ նա, որպես պատմաբան, պարտավոր է սթափ լինել: Բողոքում էին նաեւ Անտոն Քոչինյանի դեմ՝ Դարբինյանին չպատժելու համար: Եվ երբ Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղարն իր մտավախությունն է հայտնում երկրի ղեկավարին, վերջինս, կտրելով նրա խոսքը, ասում է. *«Դու կառուցի՛ր, գրելուն մի՛ նայիր, մի՛ էլ մեղադրիր գրողներին: Որ հասկանան, չեն գրի: Ժողովրդի սխրանքին արժանի հուշարձան ենք կառուցում հենց ժողովրդի համար: Չհասկացողն էլ, տա՛ Աստված, որ հասկանա: Ոչինչ, չհասկացողի զավակը կհասկանա...»:*

Այս սուրբ գործի նախաձեռնողները հաճախ են դիմել մարշալ Հովհաննես Բաղրամյանի օգնությանը: Փառապանծ զորավարը, որի ռազմական մկրտությունն ստացել է Սարդարապատում, հուշահամալիրի կառուցման ջերմ պաշտպաններից էր: Հերոսամարտից տասնամյակներ անց նա Կրեմլի նիստերի դահլիճում հիշողությամբ թղթին է պատկերել ճակատամարտի վայրն ու ընթացքը:

շարունակությունը՝ էջ 11

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը

սկիզբը՝ էջ 10

Այդ, մեղմ ասած, անբարենպաստ ժամանակաշրջանի մասին խոսելիս արժե հիշել պատմական գիտությունների թեկնածու, գնդապետ Վլադիմիր Սեյանի ասածը. *«…Հուշահամալիրի սքանչելի կառույցը նույնպես ճակատամարտ է: Թող դատեն … հաղթողներին: Հիմա մենք կարող ենք միայն զարմանալ, թե ինչպես կառուցվեց այս հուշահամալիրը: Կարելի է ասել, որ Դարբինյանը գրեց հայոց պատմության իր բաժին էջը: Գրեց, հաղթեց եւ ոչինչ, որ հետո … պատժվեր: Մեր ժողովուրդը երախտապարտ է այն մարդկանց, որոնք Դարբինյանի հետ միասին, Իսրայելյանի հետ միասին կարողացան կերտել այս բաց կառույցը: Փառք նրանց: Մենք երախտապարտ ենք բոլոր ազնիվ մտածող, միշտ ինքնայրման պատրաստ մարտիկներին…»:*

Խոսելով Վլադիմիր Դարբինյանի մասին՝ ճարտարապետ Գրիգոր Հասրաթյանն ասել է. *«…Այսօր, եթե մենք իրավացիորեն հպարտանում ենք մեր Սարդարապատի հուշահամալիրով, մեծարում ենք նրա նախագծող-ստեղծող ճարտարապետին, ժողովրդին, մենք պետք է ոչ պակաս բարձրացնենք նաեւ գաղափարակիր մարդկանց, նրանց, ովքեր ինքնազոհողության էին պատրաստ: Դրանցից էր Վլադիմիր Դարբինյանը: Այլ հարց է, որ թեկուզ դաժան ժամանակներում գրողը կարողանում է գրել, ճարտարապետը՝ նախագծել, իսկ որքան կարեւոր է, որ նրանց մտահղացումը մարմնավորվի: Եվ եթե այսօր Սարդարապատի հուշահամալիրը դարձրել ենք սրբավայր, եթե այսօր մեր պետականության վերականգնման օրը, եռագույնը պաշտոնական հրամանագրի արժանացավ, ուրեմն մտածենք, որ դա միանգամից չարվեց: Սարդարապատի հուշահամալիրի կառուցումն առաջին աստիճաններից մեկն է: Դարբինյանն ամեն ինչ արել է սիրով, նվիրումով: Ու ես ցավով եմ ընդունում, որ երբ մի խումբ մարդկանց արժանիորեն շնորհվեցին միութենական մրցանակներ, նրանց ցուցակից հեշտ ձեռքով հանվեց Դարբինյանի անունը: Նրա անվան, անձի շուրջ սադրանքներ էին հյուսվում: Ինչի՞ համար: Որ համարձա՞կ էր, անվա՞խ: Ունենալով Բաղրամյանի, Քոչինյանի հովանին՝ ճակատամարտ մղեց եւ հաղթեց: Եթե երկնչեր, չկառուցեր, գուցե եւ լռությունն ավելի երկար տեւեր: Այս տարվա Մայիսի 28-ի լույս 29-ի գիշերը ես նույնպես տեսա, թե ժողովուրդն ինչպես է դիմավորում իր զավակներին՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին: Այդ պահին ես մտածում էի Սարդարապատի ճակատամարտի ու մեծ սխրանք գործած նրա մասնակիցների, ճակատամարտին նվիրված հուշահամալիրի, նրա նախաձեռնողների ու կառուցողների մասին: Դա էլ ճակատամարտ էր»:*

Հուշահամալիրի կառուցման մասին գերմանացի գիտնականները, որ ծանոթ էին Սարդարապատի հերոսամարտին եւ դրան հաջորդած տասնամյակների քաղաքական մթնոլորտին, ասել են. *«Հասարակ հարց չէ, թե ում գործն է ավելի դժվար եղել. 1918 թվականի ճակատամարտի մասնակիցների՞, թե՞ այս հոյակապ հուշահամալիրը կառուցողների»:*

Երիցս ճշմարիտ է Վլադիմիր Դարբինյանը. *«Թող անհամեստ չթվա, եթե ասեմ՝ մեր արած գործը հանդգնություն էր: Միշտ պիտի հաշվի առնել ապրած ժամանակը, թե ինչ մտայնություն էր իշխում»:* Ինքը՝ Վլադիմիր Դարբինյանը, այս հուշարձանի կառուցման հեղինակ համարում էր Հրաչյա Քոչարին, ով ասում էր. *«Ավարայրին նախորդող դեպքերն ըստ երեւույթին չէին սպառնում մեր ազգի ֆիզիկական գոյությանը, իսկ Սարդարապատում մենք կարող էինք անհետանալ պատմության թատերաբեմից: Տեսնես երբ է գալու այն ժամանակը, երբ այս ճակատամարտն էլ իր եղիշեն կունենա, քարե մատյան կնվիրի ապագա սերունդներին»:*

Ի դեպ, հուշահամալիրը կառուցվել է համաժողովրդական հանգանակությամբ:

Հրաչյա Մաթեւոսյանն ասում է, որ ակնարկի առաջին մասի հրատարկումից հետո բազմաթիվ հեռախոսազանգեր են հնչել, շատ մարդիկ են եկել խմբագրություն: Նրանք շատ մանրամասներ էին հիշում, անձամբ ճանաչել են տասնյակ կառուցողների, ունեին թանկագին մասունքներ, լուսանկարներ: Ճարտարապետ Վարազդատ Հարությունյանն ասում էր, որ ինքը վկան ու ականատեսն է եղել այն ապրումների, որ ուներ Ռաֆայել Իսրայելյանը նախագծման-կառուցման ժամանակ: Ուսուցիչ-լրագրող Մարգարիտ Դարպասյանը հեռախոսահամարներ է տվել հեղինակին եւ խնդրել, որ նա հանդիպի այն ազնիվ մարդկանց հետ, ովքեր կառուցման ժամանակ քուն ու դադար չունեին. Դարպասյանը նրանց այնտեղ է հանդիպել եւ տարիների մտերմություն հաստատել հետները: Բժիշկ Արամ Մկրտչյանն ասում էր, որ ինքը շինարարության մասնակիցներին արգելել էր հիվանդանալ, որովհետեւ … ժամանակ չկար: Եվ այսպես՝ շատերը:

Մեր ճակատամարտերի թագն ու պսակը հանդիսացող Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշահամալիրի բացումը տեղի ունեցավ 1968 թ.-ին, երբ լրանում էր հերոսամարտի 50 տարին: Բացման օրը՝ մայիսի 25-ին, հարյուր հազարավոր մարդիկ էին հավաքվել: Այստեղ էին նաեւ երկրի ղեկավարներն ու հերոսական ճակատամարտի մասնակիցներից մի քանիսը: Իշխանություն ու ժողովուրդ եկել էին հարգանքի տուրք մատուցելու ազգի այն հերոս զավակներին, ովքեր կես դար առաջ ցեղի հավիտենական երթը, արժանապատիվ երթը բնօրրանում ապահովելու համար իրենց կյանքը տվեցին՝ խիզախության եւ արիության փառավոր էջեր գրելով հայ ժողովրդի՝ ազգային-ազատագրական պայքարներով լեցուն բազմադարյա պատմության մեջ:

Բացման խոսքով հանդես եկան ՀԿԿ Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Դարբինյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը:

«Սարդարապատի ճակատամարտը,- իր խոսքում ասաց երկրի ղեկավարը,- *տարերայնորեն պայքարի ելած ժողովրդական մասսաների անձնազոհության եւ խիզախության փայլուն արտահայտություն հանդիսացավ: Այն ժամանակ այս դաշտում կարծես թե հավաքվել էր ամբողջ հայ ժողովուրդը: Կյանքի գնով հաղթանակի հասնելու պատրաստ մարտիկների կողքին կանգնել էին ծերունիներ, երեխաներ, կանայք, դեռատի աղջիկներ: Սարդարապատի հերոսամարտն անջնջելի տառերով է գրված հայ ժողովրդի պատմության մեջ: Դա համաժողովրդական մի կռիվ էր պատվի ու գոյության համար: Ճակատամարտը վճռական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կանխելու գործում, հանդիսացավ ապրելու եւ գոյատեւելու նրա անդրդվելի կամքի փայլուն վկայությունը: Ամենայն իրավամբ մենք կարող ենք ասել, որ Սարդարապատի ճակատամարտը մեր ժողովրդիբազմադարյան ազգայինազատագրական պայքարի ամենափայլուն էջը հանդիսացավ: … Այդ համաժողովրդական պայքարը Արեւելյան Հայաստանի հայերին փրկեց ֆիզիկական բնաջնջումից, որը ծրագրել էր երիտթուրքական կառավարությունը: … Սարդարապատում կռվում էին հայ ժողովրդի ամենատարբեր խավերի պատկանող մարդիկ: Մեր ժողովրդի պատմությունը չի մոռանա Սարդարապատի ճակատամարտի հրամանատար, գնդապետ Դանիել բեկ Փիրումյանի, պարտիզանական գնդի հրամանատար Դոլուխանյանի, կապիտաններ Սերգո Աթանեսյանի եւ Սակիլարիի, շտաբս-կապիտան Վարդան Ջաղինյանի, տասնյակ հարյուրավոր շարքային մարտիկների ու կամավորների, արեւմտահայ ազատագրական շարժմանը մասնակցած հին ու նոր պարտիզանների անունները»:*

Գեղեցիկ ու իմաստալից էր շինարար բանվոր Հ. Մանուկյանի խոսքը. *«Հայաստանում մայիս է, եւ մայիսին կարծես ավելի է գեղեցկացել Հոկտեմբերյանի բարգավաճ շրջանը՝ իր նորակերտ ավաններով ու գյուղերով: Շինարարի համար մեծ պատիվ է կոթողներ կերտելը: Թող մեր կառուցած այս հուշարձանի քարերը սերունդներին հասցնեն այստեղ տեղի ունեցած ճակատամարտի նշանակությունը, պատմեն քաջի մահով ընկած հերոսների անմահ սխրագործության մասին»:*

Ելույթ է ունենում նաեւ Նաիրի Զարյանը. *«Սարդարապատի ճակատամարտը մեր ժողովրդի ինքնապաշտպանության դարավոր կռիվների մեջ ամենահերոսականն էր, ամենաբախտորոշը: Մեր ժողովուրդը զանգվածաբար հանդես բերեց մարդկային ամենաբարձր առաքինություններ. հայրենասիրություն, քաջություն, անձնազոհություն, համախմբվածություն, կարգապահություն, ցեղասպանության մոլուցքով եկող թշնամուն հաղթելու եւ ապրելու անսասան կամք: Սարդարապատի ճակատամարտը իսկական ժողովրդական գործ էր, հայրենական պատերազմի դասական օրինակ, որով ժողովուրդը հարկադրեց հասարակական բոլոր խավերին ու հոսանքներին, առանց հասակի, սեռի եւ համոզմունքի խտրության, համախմբվել ընդհանուր թշնամու դեմ…»:*

Սարդարապատի ճակատամարտի մասնակից Ա. Մուրադյանն իր ելույթում պատմում է այն մասին, թե մեր ժողովրդի զավակները ինչպես են կենաց ու մահու կռիվ մղել հայրենի երկրի յուրաքանչյուր թիզ հողի համար:

Նոր Արմավիրի կոլտնտեսության վարչության նախագահ Ն. Սիմոնյանն իր խոսքում ասում է. *«Երբեմնի այս անապատում, ուր տեղի ունեցավ մեր ժողովրդի կենաց ու մահու կռիվը, այժմ անծայրածիր այգեստաններ, մրգաստաններ են տարածված: Մեր հողագործ մարդիկ, որ քարից ողկույզ են քամում, սիրով մասնակցեցին այս փառավոր պարկ-հուշարձանի կառուցմանը, որը սերունդներին կպատմի մեր ժողովրդի այն որդիների ու դուստրերի մասին, որոնք հերոսաբար մարտնչեցին թուրք զավթիչների դեմ»:*

Բացման արարողությունը հայտարարվում է փակված, ստվար բազմությունը շարժվում է դեպի հուշահամալիրի մուտքը: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը կտրում է կարմիր ժապավենը: Հուշահամալիրը բացված է: Մարդկային անվերջ հոսքը ձգվում է դեպի հուշարձան-համակառույցի կոթողները:

Մեր ազգի հավերժությունը խորհրդանշող բիբլիական լեռան ներքո՝ շողամրցող Մասիսների ու Արագածի միջեւ փռված Արարատյան դաշտում՝ այն վայրում, ուր կես դար առաջ տեղի էր ունեցել ճակատամարտը, վեր է խոյանում Սարդարապատի հաղթանակը փառաբանող հուշահամալիրը: Այն կառուցվել է միջնադարյան հայ դասական ճարտարապետության սկզբունքներով: Հեղինակները (ճարտարապետ՝ Ռ.Իսրայելյան, քանդակագործներ՝ Ա. Հարությունյան, Ա. Շահինյան, Ս. Մանասյան) իրենց ստեղծագործության հորինվածքին տվել են տարածական լուծում:

Հուշարձանի մուտքը երկու կողմից պահպանում են ուժ ու հաստատակամություն խորհրդանշող ցուլերը: Ըստ նախնական մտահղացման՝ խճուղու առանցքով պետք է վեր խոյանար հաղթանակած սուրը: Այն փոխարինվեց զանգաշտարակով (35 մետր բարձրությամբ), ժողովրդի հիշողության համաձայն՝ ճակատամարտի օրերին Սարդարապատից մինչեւ Վաղարշապատ ու Երեւան ղողանջել են բոլոր եկեղեցիների զանգերը՝ ժողովրդին ի զեն կոչելու, սթափ ու զգոն պահելու, աշխարհազոր հավաքելու համար: Բազալտե պատվանդանից աստիճանաձեւ վեր է բարձրանում չորս մույթ (տեղական կարմիր տուֆից), որոնք վերնամասում իրար են միանում եռաշար կամարներով, որոնցից կախված են զանգերը, որոնք տոն օրերին կամ հատուկ առիթներով ղողանջել են (մշակել էր Ռոբերտ Աթայանը), իսկ այսօր՝ յուրաքանչյուր կես ժամը մեկ: Զանգակատան զանգերը էլեկտրոնային սարքի միջոցով հնչեցրել են հայրենասիրական մեղեդիներ (դա առաջին այդպիսի համակարգն էր ԽՍՀՄ-ում): Ի դեպ, զանգերը, Վազգեն Վեհափառի խորհրդով, ձուլվել են Մարսելում: Զանգակատան պատվանդանի հակառակ կողմում աղբյուր է, որի վերեւի մասում՝ քարի վրա փորագրված է. *«Հայրենիքի փրկության համար զոհված զավակներին՝ հավերժ փառք»:*

Հայոց ազգագրության թանգարանի տնօրինությունը նախատեսել է Սարդարդապատի հերոսամարտի 100-ամյակին ընդառաջ զանգերը հնչեցնել համակարգչային կարգաբերմամբ: Զանգաշտարակից դեպի Հուշապատ ձգվում է մի ծառուղի, որի աջ կողմում բազմել են հինգ խրոխտ արծիվներ, որոնք, ըստ հեղինակի մտահղացման, *«հաղթանակը բերող ռազմիկներ են, նրանց ոգիները եւ դարձած են դեպի ժողովուրդը՝ մենք կանք, մենք ձեր մեջ ենք, ձեզ հետ…»:* Ճեմուղին ավարտվում է կիսաբոլորուն հաղթանակի հուշապատով (երկարությունը՝ 55 մ, բարձրությունը կենտրոնում՝ 7 մ, եզրերում՝ 10 մ): Այն երկու կողմից զարդարված է խորաքանդակներով եւ բարձրաքանդակներով, որոնցում արտահայտված են հայ ժողովրդի մարտական սխրանքները եւ խաղաղ ստեղծագործ աշխատանքը: Հուշապատին դրոշմված է բարի ուժերը խորհրդանշող թեւավոր ձիերի պայքարը չար ուժերի՝ վիշապների դեմ: Հուշապատի մեջ կամար է արված, որն այցելուին ուղղում է դեպի *«Վարդավառ»* սեղանատունը, որի պատին գրված է. *«Խոնարհվելով մեր մեծ նախնիների անունների առաջ եւ ներշնչված նրանց ճարտար գործերով՝ երախտապարտ հետնորդներս կառուցեցինք այս սեղանատունը»:* Ըստ հեղինակի՝ այցելելով այս հերոսական վայրը՝ չէր կարելի թաս չբարձրացնել հայրենիքի կենաց իրենց կյանքը զոհած հերոսների հիշատակին:

Հուշակառուցի վերջին կոթողը 1978 թ. կառուցված Հայոց ազգագրության թանգարանի՝ միջնադարյան ամրոց հիշեցնող շինությունն է: Ճարտարապետը դարձյալ Ռաֆայել Իսրայելյանն է: Վարպետը այն նախագծելիս օգտագործել է միջնադարյան ճարտարապետության բազմաթիվ ինքնատիպ հնարանքներ: Ուշագրավ է շենքի հատակագծային հորինվածքը՝ կամարակապ խորաններ, ներքին չորս բակեր: Շենքի երկրորդ հարկը լուսավորվում է ժողովրդական բնակարաններին հատուկ երդիկներով: Շինությունն ունի երկանկյուն պատուհան՝ մեկը նայում է դեպի Արագած, մյուսը՝ Արարատ: Թանգարանի կենտրոնում եռագմբեթ սրահն է, որի տանիքն ավարտվում է հայկական ավանդական բնակարաններին հատուկ հազարաշեն ծածկով: Այստեղ 2008 թ.-ից ներկայացվում է *«1918 թ. մայիսյան հերոսամարտերը եւ Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը»* թեմայով ցուցադրությունը: Թանգարանի առաջին եւ երկրորդ հարկերի ցուցասրահներում ներկայացված է հայոց ազգային մշակույթը՝ վաղ շրջանից մինչեւ մեր օրերը: Թանգարանային հավաքածուները համալրվել են պեղածո նյութերով, ազգագրական գիտարշավներից, այլ թանգարաններից ձեռք բերված առարկաներով եւ արտերկրի մեր հայրենակիցների կողմից արված մեծարժեք նվիրատվություններով: Հայաստանի Հանրապետությունում ազգագրական բնույթի այս եզակի թանգարանում պահվում է ավելի քան 73.000 թանգարանային առարկա:

Ամեն տարի հուշահամալիրում մեծ շուքով նշվում է Սարդարապատի ճակատամարտի հաղթանակը, հարգանքի տուրք մատուցվում Սարդարապատի հերոսներին, շուրջ մեկ դար առաջ հայության բախտը որոշող ճակատամարտի վայրում հնչում է ազգային երգն ու երաժշտությունը, օդը լցվում է անհուն հպարտությամբ ու հայրենասիրությամբ:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ

Սարդարապատ

Խոսքը Պարույր ՍԵՎԱԿԻ, երաժշտությունը Էդգար ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Երբ չի մնում ելք ու ճար,
Խենթերն են գտնում հնար,
Այսպես ծագեց, արեգակեց
Սարդարապատի մարտը մեծ:

Կրկներգ - Զանգե՛ր, ղողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք
Սարդարապատից:

Ավարայրից ջանք առանք,
Այստեղ մի պահ կանգ առանք,
Որ շունչ առած շունչներս տանք
Սարդարապատի պատի տակ:

Կրկներգ - Զանգե՛ր, ղողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք
Սարդարապատից:

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,
Մենք չհանգանք՝ դեռ կգանք,
Երբ տան զանգը, ահազանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք:

Կրկներգ - Զանգե՛ր, ղողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք
Սարդարապատից:





շարունակությունը՝ էջ 13

Սարդարապատ

սկիզբը՝ էջ 12



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Մասիս քաղաքի հ. 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (19 դասաժամ), ինֆորմատիկայի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի հ. 3 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Մասիս, Դպրոցականների 24:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0236) 4-29-02 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի հ. 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուրայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** Կոտայքի մարզի Աբովյանի հ. 8 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Աբովյան, Սարալանջ 8/10:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0222) 2-15-65 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Նոր Հաճնի «Մեծն Մուրադի անվան հ. 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի երկու դասվարի, ֆիզիկայի, տեխնոլոգիայի (տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 12:00-ին,*** Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան հ. 4 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Նոր Հաճն, Շահումյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 4-25-96 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16դասաժամ), բանգիտության (12 դասաժամ), ֆիզիկայի (7 դասաժամ), ֆիզկուլտուրայի (16 դասաժամ), տեխնոլոգիա (8 դասաժամ, տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ք. Քաջարան, Խանջյան 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 3-21-09 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Արզականի Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (4 դասաժամ, աղջիկների խումբ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Արզականի Խարատրյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Արզական , Բաբաջանյանի 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 03-39-35 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Մրգաշատի Վ.Ափոյանի անվան թիվ.1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ, տղաներ), կերպարվեստի (2 դասաժամ), ինֆորմատիկայի (7 դասաժամ), երաժշտության (4 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի Վ.Ափոյանի անվան թիվ.1 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Մրգաշատ 5-րդ փ.15շ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 00-06-34 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Սիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (7 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ, աղջիկների խումբ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Սիսի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 96-56-59 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Ն.Վ. Գոգոլի անվան հ. 35 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականության (19 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** Երևանի Ն.Վ. Գոգոլի անվան N 35 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Երեւան, Էրեբունու փ. 16 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 45-21-01 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Երևանի «Միսաք Մանուշյանի անվան հ. 48 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 15-ին՝ ժամը 14:30-ին,*** Երևանի Միսաք Մանուշյանի անվան h 48 հիմնական դպրոցում. հասցեն՝ Քանաքեռ-Զեյթուն, Դրոյի փ. 11:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 24-01-70 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (8 դասաժամ), ֆիզկուլտուրայի (12 դասաժամ), մաթեմատիկայի (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ***հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Գեղանիստ, 21/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 46-90-99 հեռախոսահամարով:

Հայտարարություն

